

ՄԱՐԶԻԳ

Մարզիկ

ՄՃԼԵ ՐԻԱՅԻԿԵ ՏԻԻՐԵ
ՏՎԵՐԻՏԵՐ ԴԵՄԵԿԵ ԻՍՏԻՏՈՒՏԻ ԲԵՐՈՒՏ

marzig

SPORTS MAGAZINE

32ԸԴ ՏՄԻԻ, 2013, ԹԻԻ 4 (370) - VOL. XXXII N° 4

ՍԵՆԵ ԴՆՈՒՆԵ ԵՒ ԴՆՈՒՆԵՆ - ԵԴԴ ՐԳԵ Է



ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
ՏՈՂԱՆՑՔ 2013

ՄԿԱՌՏԱԿԱՆ ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ՍԵՄԻՆԱՐ ՀԱԼԷՊԻ ՄԷՉ

Րաֆֆի Սիլահեան
ՀԱԼԷՊ



Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ միութեան տարբեր շրջաններուն մէջ կը կազմակերպուին վկայեալ կարգի դասընթացքներ: Ծանօթ է, որ 2008-ին, համա-Հ.Ս.-Ը.Մ.ական միջ-խմբապետական Ե. Խորհրդաժողովին, վաւերացուեցան վկայեալ կարգի յատուկ տեսական եւ գործնական գիտելիքները:

Վերջին ամիսներուն, Սուրիան հարաւածած տագնապալի օրերուն, առկա դժուարութիւնները յաղթահարելով, Հ.Ս.-Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդին նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ սկաուտական վկայեալ կարգի սեմինարը, որուն երրորդ հանգրուանը արդէն հասաւ իր աւարտին:

Սեմինարին դաստիարակչական ծրագիրը բաժ-

նրւեցաւ հանգրուաններու: Առաջին հանգրուանի դաստիարակչական ծրագիրը փոխանցուեցաւ հիւր դասախօսներու կողմէ, որոնք արդիական միջոցներով ներկայացուցին իրենց օգտաշատ նիւթերը: Երկրորդ հանգրուանին դասախօսները եղան սեմինարին մասնակցող քոյրերն ու եղբայրները: Իւրաքանչիւրին թեման եղաւ սկաուտական կեանքին հետ առընչութիւն ունեցող եւ խմբապետներու վերաորակաւորման անհրաժեշտ հետաքրքրական նիւթեր:

Չոյգ հանգրուաններուն ամփոփումը եղաւ միօրեայ գործունէութեամբ մը, որ տեղի ունեցաւ «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան մէջ: Գործունէութիւնը յատկանշուեցաւ դաստիարակչական հարուստ ծրագիրով: Սկաուտական խաղերով ստեղծուեցաւ մտերմիկ մթնոլորտ: Յայտնենք, որ նախքան սեմինարին աւարտական հանգրուանը, մասնակից քոյրերն ու եղբայրները իրենց թեզերը պիտի պատրաստեն եւ Շրջ. Սկաուտ. Խորհուրդին փոխանցեն:





ԹԻՒԻՆ ՆԻՒՆԵՐԸ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضية شهریه تصدیرها جمعیه الهومنتمن الریاضی



Մարզական ամսաթերթ
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

32ԴԴ ՏԱՐԻ, 2013, ԹԻՒ 4 (370)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 Սեդա Պէշեան (Լիբանան),
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Գրիգորիս Պողարեան
 Աբօ Մոսիկեան

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողմի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, Եհնիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 4000 լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշդուած է 48000 լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$70,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Ակնարկ 3
- Անդրադարձ 4
- Դէմքերու Հետ 6
- Նորութիւն 8
- Պատմութիւն 9
- Մասնաձիղէ Մասնաձիղ 16



ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 14
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40





Խ
Մ
Բ
Ա
Գ
Ր
Ա
Կ
Ա
Ն

ՕՆ, ԿՐՏՍԵՐ ՍԵՐՈՒՆԴ

(ԱԿՆԿԱԼՈՒԹՒԻՆՆԵՐ 95-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Յ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակի տօնակատարութիւններուն հետ, բոլորին աչքերը սեւեռած են միութեան կրտսեր սերունդին, այսօրուան գայլիկարծուիկին, մարգական խումբերու դողդոջ ներկայացուցիչին, որ վաղը, միւս օր կոչուած է ըլլալու միութեան առաջնորդող տարրը: Ինչե՛ր չեն թագնուած այդ սերունդի ներաշխարհին մէջ. ի՛նչ երազներ, ի՛նչ ծրագիրներ: Այդ վառվռուն աչքերը, որոնք միութեան ապագան կը ցոլացնեն, իրենց բոցկլտող կրակը առած են անցեալէն ու իրենց սէգ նայուածքը ուղղած են ապագային:

Այսօրուան կրտսեր սկաւտը կամ մարզիկը վաղուան երէց-պարմանուհին է, ներկայացուցչական խումբի մարզիկը, հուսկ՝ Յ.Մ.Ը.Մ.ի վարչականն ու պատասխանատուն:

Կրտսեր Յ.Մ.Ը.Մ.ականը ազգին կորիզն է, վաղուան ազգը ամբողջ:

Կրտսեր Յ.Մ.Ը.Մ.ականները գիտե՞ն այս բոլորը:

Կրտսեր Յ.Մ.Ը.Մ.ականները ունին իրենց երազները, ծրագիրները: Անոնք պէտք ունին անբասիր առաջնորդներու: Անոնք պէտք ունին իրենց հոգերով զբաղող պատասխանատուներու:

Իւրաքանչիւրը ունի իր երազը, որ ազգի մը երազն է: Բոլորն ալ բարի երազներ են, շինիչ նպատակով: Բոլորն ալ ունին իրենց իտեալները, ուրեմն՝ բոլորն ալ իրաւունք ունին ապրելու:

Կրտսեր Յ.Մ.Ը.Մ.ականը բոլոր կրտսերներէն աւելի ձգտում մըն ալ ունի.- ծառայել ազգին ու հայրենիքին: Կրտսեր Յ.Մ.Ը.Մ.ականին աւիւն տուող ազգն ալ ունի իր ձգտումը, որ բոլորին իտեալներուն խտացումն է.- ամբողջական ու հզօր Հայաստանը:

Բոլոր ազգերէն աւելի մե՛նք սիրած

ենք հայրենիքը եւ անոր համար զոհած ենք ամէն ինչ:

Արդ, կրտսեր Յ.Մ.Ը.Մ.ականէն կ'ակընկալուի առաջին հերթին ըլլալ եռանդուն հայրենասէր եւ ամէն ծիգ ի գործ դնել ապագային այդ հայրենասիրութիւնը *գործնապէս* արտայայտելու համար, ամբողջական ու հզօր Հայաստանը քար առ քար կերտելու համար:

Կրտսեր Յ.Մ.Ը.Մ.ականը, իբրեւ պարտականութեան գիտակից, արի ու վեհանձն մարդ, կը սպասուի որ գիտնայ արժէքը կարգապահութեան եւ հնազանդութեան: Արդարեւ, կեանքի մէջ յաջողելու գլխաւոր պայմանը կարգապահութիւնն է: Գիտակցութենէ մղուած հնազանդութիւնը կարգապահութեան լծակն է: Կարգապահութեամբ երաշխաւորուած անձերը եւ հաւաքականութիւնները միայն կրնան իրենց վստահած գործերը յաջողութեամբ կատարել:

Կրտսեր Յ.Մ.Ը.Մ.ականը կը պատկանի այն միութեան, որ իրեն հաւատամբ ընդունած է հայութիւնը: Հետեւաբար, իբրեւ հայ կարենալ ապրելու համար, կրտսեր Յ.Մ.Ը.Մ.ականին անհրաժեշտ է նուիրում: Անհրաժեշտ է Արարատի հաւատք՝ հայու աննկո՛ւն հաւատք:

Օ՛ն, կրտսեր Յ.Մ.Ը.Մ.ական, 95-ամեակը կը պատգամէ՝

Ծառայել գաղափարին, երբեք՝ մարդոց:

Ծառանալ ընդդէմ չարին, ըլլալ պաշտպանը արդարին ու բարիին:

Հպարտանալ հայութեամբ եւ հայօրէ՛ն քալել առաջ:

Որովհետեւ՝

Քուկդ է ապագան: Բոլորին յոյսերը կապուած են քեզի: Չդողաս ու չսայթաքիս:

Քալէ՛ հաստատ, Յ.Մ.Ը.Մ.ականի ոգիով ու հայու հաւատքով:

ՈՂՋՈՅՆ «ԿԱՄԱԲՈՐ ԲԱՆԱԿ»ԻՆ



Մ.Թ.
ՊԵՅՐՈՒԹ

95 տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ. հաւատքով եւ վստահութեամբ կարողացաւ գոյատեւել, որովհետեւ 1915-ի Մեծ Եղեռնէն ետք ան հայ ժողովուրդին մէջ վառ պահեց ազգապահպանման ոգին: Մեր ակումբներուն եւ դաշտերուն մէջ ան համախմբեց տասնեակ հազարաւոր հայորդիներ՝ անոնց տալով հայեցի դաստիարակութիւն:

95 տարիներ առաջ Հ.Մ.Ը.Մ. ծնունդ առաւ հայ ժողովուրդի գաւազաններուն ծառայելու, մարմնամարզի եւ սկաուտութեան միջոցով անոնց ազգային ինքնութիւնը պահպանելու համար:

95 տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ. մարզական եւ սկաուտական փառատօններով խանդ ու կորով սփռեց, սորվեցուց յաղթել, եղաւ մեր հպարտութեան աղբիւրը, մեր ազգային արժէքներուն ներշնչարանը: Անոր նպատակը չէ եղած անդամահաւաք եւ երբեք պիտի չըլլայ, Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը եղած է հայապահպանում: Հ.Մ.Ը.Մ. այն սակաւաթիւ կազմակերպութիւններէն մէկն է, որ յաճախ առանց նիւթական բաւարար միջոցներու, հիմնուելով իր անդամներու նուիրումին եւ զոհաբերութեան ոգիին վրայ, եւ ամէնէն կարեւորը՝ կամաւոր աշխատելու եւ նուիրաբերելու յատկութիւններով կարողացած է կերտել յաղթանակներ եւ գոյատեւել:

Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը ազգային-միութենական ինքնութեան գիտակցութեան սերմանումն է հայ մանուկին, պատանիին եւ երիտասարդին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի մրցումներուն յաջողութիւնները պէտք է արդիւնքը ըլլան կամաւոր աշխատողներու եւ համակիրներու ծանր ու նուիրեալ աշխատանքին:

Իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական, իբրեւ անհատ ու իբրեւ հաւաքականութիւն, պէտք է զօրակցի Հ.Մ.Ը.Մ.ի վերելքին:

Հ.Մ.Ը.Մ. յաջողութեան կը հասնի միայն ամբողջական նուիրումի եւ «Բարձրացի՛ր-բարձրացուր» կարգախօսի հաւատքին շնորհիւ: Տասնամեակներ շարունակ Հ.Մ.Ը.Մ. եղաւ ու կը մնայ հայուն արժանապատուութեան մէկ խորհրդանիշը:

Այսօր, արհեստավարժութեան հարկադրանքը Հ.Մ.Ը.Մ.ի դրօշն ու նշանակը տարածած է ոչ-հայ մարզիկներու վրայ (այս կէտը արձանագրելով չենք ուզեր ազգայնամոլի տպաւորութիւն թողոլը), սակայն կ'ուզենք յիշեցնել, թէ Հ.Մ.Ը.Մ.ի անունին մէջ ՀԱՅ-ը ունի անժամանցելի իմաստ ու պատգամ, ինչ որ 95-ամեայ այս միութիւնը կը դարձնէ իւրաքանչիւր՝ զայն գատորոշելով հայկական եւ ոչ-հայկական մարզական միութիւններէ:

Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան մէջ հիմնական տեղ ունի ՀԱՅ սերունդներու կերտումը, եւ «Յառաջ նահատակ ցելի անմահներ» քայլերգին առաջին տողն ու շարունակութիւնը սեղմ պատգամ մըն է ուղղուած իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի, կակուղ թաթիկէն մինչեւ երէց պարմանուհին, վաստակաւոր վարչականը, խմբապետը եւ նուիրեալ սկաուտը կամ մարզիկը: Այդ պատգամին մէջ կայ Եռագոյն դրօշը Արարատի գագաթին կոթողելու իղձն ու հրամայականը:

Այդ պատգամը չի կրնար կատարելապէս իրականանալ, եթէ Հ.Մ.Ը.Մ.ականը չունի մեր պատմութեան, մեր արժէքներուն եւ ազգային ժառանգութեանց գիտելիքները: Հ.Մ.Ը.Մ. սոսկ մարզական միութիւն մը չէ եղած եւ պիտի չըլլայ երբեք:

Ան կը կոչուի ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ, այսինքն՝ մարմնակրթական ասպարէզներ կ'ընծայէ հայ պատանիին ու երիտասարդին, եւ անոր անուան առաջին բառը՝ ՀԱՅ-ը զինք բնականաբար կը գատորոշէ մարզական այլ միութիւններէ եւ անոր կու տայ առաքելութիւն մը, որ խորքին մէջ անմիջականօրէն կապ ունի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին հետ:

Հ.Մ.Ը.Մ.ականը պիտի կերտէ մարզական նուաճումներ, որպէսզի վերականգնէ եւ նոր թուիչք առնէ հայուն գոյատեւելու կամքը:

Հ.Մ.Ը.Մ.ի շապիկը կրող Փութպոլիստին, պասքեթպոլիստին, հեծելանւորդին, գունդ ու սկաւառակ արձակողին, փինկ-փոնկի ախոյեանին ու, տակաւին, միջ-դպրոցական մրցումներու ընթացքին նշանակուած իւրաքանչիւր կողմն ու շահուած իւրաքանչիւր բաժակը ամբողջ հայութեան համար պէտք է ըլլան յաղթանակի ու հպարտանքի առիթ:

Եկէք այսօր խոնարհինք մեզմէ յաւէտ բաժնուած բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին, ինչպէս նաեւ ողջունենք բոլոր այն Հ.Մ.Ը.Մ.ականները, որոնք իրենց ծառայութիւնը կատարեցին ու կը կատարեն համեստաբար ու կամաւորաբար:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը եւ իր «Կամաւոր բանակ»ը:

Ի ՍՊԱՍ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ

Սերոբ Սահակեան ԵՐՈՒՍԱՂԵՍ

Հ Մ.Ը.Մ., որպէս սփիւռքահայ իրականութեան առաջնակարգ եւ ամէնէն աւելի տարածուն մարզական թէ սկաուտական կազմակերպութիւն, անգամ եւս հանդէս կու գայ համահայկական մարզական հարսանիքով, որուն կը մասնակցին սփիւռքեան հեռաւոր շրջաններէն մինչեւ Հայաստան, աւելի քան 600 մարզիկներ, որոնց մրցակցութիւնները կը հանդիսաւորեն իրենց շրջաններէն ժամանած յաւելեալ հազար համակիրներ ու երկրպագուներ:



Մեր խօսքը կը վերաբերի համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերուն, որոնք տեղի կ'ունենան 27 Յուլիսէն 3 Օգոստոս, Երեւան, Հայաստան: Եղածը փաստօրէն պետական մակարդակի նախաձեռնութիւն մըն է, որ կը կարօտի իւրաքանչիւր շրջանի ներուժի առաւելագոյն լարումին, նկատի առնելով կազմակերպչական հսկայական աշխատանքներու զուգահեռ, նիւթական այն հսկայական պահանջները որոնք իւրաքանչիւր մարզիկի համար կրնան արժել շուրջ 1500 տոլար ու աւելին:

Նկատի առնելով վերոյիշեալ տուեալները, պարզ է թէ իւրաքանչիւր մասնաճիւղ իր պատճառներով կ'ստանայ իր «մեքանիզմ»ները ամբողջական զօրակոչի պիտի ենթարկէ, գէթ Ֆինանսական բեռը թեթեւցնելու համար մասնաճիւղին թէ անհատ մարզիկին, որ արդար ակնկալութիւնը պիտի ունենայ այդ աջակցութեան:

Հետեւաբար, իւրաքանչիւր գիտակից միութենականի պարտքն է չսպասել պաշտօնական մարմնի դիմումին, այլ «նախապարձակ» ըլլալ՝ իր ներդրումը բերելու ի սպաս այս հսկայական յանձնառութեան:

Այսու սիրելի Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր, համակիր թէ զօրավիգ, հազիւ թէ օրեր մեզ կը բաժնեն այն հոգեպարար պահէն, երբ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը պիտի պանծայ Երեւանի «Ազատութեան» հրապարակին կեդրոնը, յայտարարելով բացումը մարզախաղերուն ուր պահ մը աւելի պիտի «յոխորտաս» պատկանելիութեամբը Հ.Մ.Ը.Մ.ին: Ուստի, այս պահուն լաւագոյնս ներկայացման սիրոյն, կատարեցէք ձեր լաւագոյնը եւ ըսէք՝ «Ես հո՛ս եմ ու ձեր ակնկալութիւնը պիտի արդարացնեմ»:

ԵՐԱՆՏԱՇԱՏ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ

ՊԱՐԳԵՒ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Եղբ. Պարգեւ Պարսամեան ծնած է Եոզկաթ, 15 Սեպտեմբեր 1915-ին: Փոքր տարիքին, ընտանիքին հետ կը հաստատուի Պուլկարիոյ Սոֆիա մայրաքաղաքը, ուր կը մնայ մինչեւ պատանեկութիւն: Ուսումը կը ստանայ Մեսրոպեան հայկական վարժարանին մէջ եւ սկաուտական շարքեր կ'անցնի Պուլկարիոյ մէջ:

Շրջան մը կը բնակի Փրակա, ապա՝ Պերլին: Դեկտեմբեր

«Մարզիկ»ի նախորդ թիւով տեղեկացուցած էինք, թէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերը պիտի ոգեկոչեն երախտաշատ միութենականներու յիշատակը:

Նոյն առիթով, ներկայացուցած էինք կենսագրական տրւեալները երախտաշատ 14 եղբայրներու: Ստորեւ՝ կենսագրական տուեալները երկու այլ եղբայրներու, որոնք միութենական պատկառելի վաստակով իրենց անջնջելի հետքը ձգած են Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանէն ներս:

13 անգամ: Դեկտեմբեր 1974-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Պատգամաւորական ժողովին, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին կեդրոնական վարչութեան անդամ, չորս տարուան ժամանակաշրջանի մը համար:

1939-ին կը հաստատուի Արժանթինի մայրաքաղաք Պուէնոս Այրէս, ուր եղբօրը՝ Արտաշէսի եւ այլ հայրենակիցներու հետ կը հիմնէ Հ.Մ.Ը.Մ.ի տեղոյն սկաուտութիւնը: Եղբ. Պարսամեան 1944-1974 Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին ատենապետութիւնը կը վարէ



Հ.Մ.Ը.Մ-ի Բ. Պատգամաւորական Ժողովին (1979, Նիկոսիա) ան կը վերընտրուի Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

11 Նոյեմբեր 1989-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի հիմնադրութեան տօնակատարութեան առիթով, եղբ. Պարգեւ Պարսամեան կը ըստանայ «Մառայութեան» շքանշան:

1993-ին, ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան «Արժանեաց» շքանշանին:

Ան կ'ըլլայ օրինակելի, համեստ ու նուիրեալ, ազգային-միութենական սկզբունքներու հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ-ական մը: Կը մահանայ 7 Փետրուար 2004-ին, Պուէնոս Այրէս:

կանի Սեպտեմբերին: Շուտով ան կ'անդամագրուի Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն մասնաճիւղին, ուր եւս մաս կը կազմէ վոլիպոլի, պասքէթի եւ փինկ-փոնկի խումբերուն: Անմիջապէս կը նշանակուի մարզադաշտի վերակացու:

Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ եղբ. Տաղլեանի յանձնառութիւնը կ'ըլլայ մնայուն եւ եռանդուն, վարչական կազմի անդամակցութեան բազմաթիւ առիթներով՝ 1952-1954, 1958-1959, 1963-1964 եւ 1972-1978: 1978-1981 ան կը վարէ Պուէնոս Այրէսի մասնաճիւղին ատենապետութիւնը, եւ մեծ դերակատարութիւն կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ստեղծման մէջ:

Իբրեւ պատգամաւոր, եղբ. Տաղլեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ-ի Ա. Պատգամաւորական Ժողովին (Դեկտեմբեր 1974, Լիբանան): 1987-1991 ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան:



ՃՈՐՃ ՏԱՂԼԵԱՆ

Եղբ. Ճորճ Տաղլեան ծնած է Հալէպ, 15 Յունուար 1925-ին: Հ.Մ.Ը.Մ-ին կ'անդամագրուի մանկութեան տարիներուն: Երիտասարդութեան ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի պասքէթի եւ վոլիպոլի խումբերուն, ու կը ճանչցուի իբրեւ փայլուն մարզիչ:

Եղբ. Տաղլեան Պուէնոս Այրէս կը հաստատուի 1948 թուա-

«ՄԱՐՁԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Զարման Տաղլեան (Արժանիին) 100 \$
- Յակոբ Գալայճեանի մահուան Ա. տարելիցին առիթով՝ Գալայճեան ընտանիք 100 \$

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY **Armavia**
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand/Le Monde, Terre vue du Ciel. Licence 075 960031 StudioVICEN 2005 PARIS

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com


48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ԵԹԷ ՈԳԻ ՉԿԱՅ, Հ.Մ.Ը.Մ. ՉԿԱՅ, ԱՅԼ՝ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆԱՑԱԾ ԿԵԱՆՔ ՄԸ

Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ՝ ԵՂԲ. ՊԱՏՐԻԿ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ



ՀՄ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան նախկին անդամ եղբ. Պատրիկ Կիլպչենկեան, երբ 1949-ին Իրանէն փոխադրուած է Պէյրութ, առաջին անգամ այցելած է Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի ակումբը, ուր անոր մօրեղբայրը՝ Կրէկուար Միսաեւտիքեան պատասխանատու եղած է Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի հեծելարչաւի խումբին:

Ընկերանալով իր մօրեղբօր՝ եղբ. Կիլպչենկեան մնայուն կերպով այցելած է ակումբ՝ այսպէս, ան շուրջ երեք տարի մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարչաւի յանձնախումբին:

«Այդ շրջանին էր, որ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղը բարգաւաճ վիճակ մը կ'ապրէր, եւ օր մը Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Խորհուրդը առաջարկեց, որ մաս կազմեմ իր աշխատանքներուն: Այս ծիրին մէջ երեք տարի զբաղեցայ այդ աշխատանքներով՝ առանց օր մը մտածելու, թէ կրնամ սկաուտ ըլլալ: Սակայն յանկարծ ստացայ սկաուտ դառնալու հրաւեր մը՝ տոքթ. Վարդգէս Յովնանեանէն, որ բացատրեց, թէ կը կազմուի երէցներու խումբ մը, եւ յարմար գտաւ, որ քանի մը ընկերներով մենք ալ մաս կազմենք այդ խումբին: Այդ օրե-

րուն Դամասկոսէն եկած էր փորձառու խմբապետ Յակոբ Մանուկեանը, որ աւելի ուշ երկրէն մեկնեցաւ եւ ես դարձայ խմբապետ», կ'ըսէ եղբ. Կիլպչենկեան:

Եղբայրը իր յուշերուն մէջ խորասուզուելով պատմեց, թէ օրին իրենց փորձառութիւնը նախնական էր, աւելցնելով սակայն, որ իրենք ունէին սկաուտական գիտելիքներու գիրք մը, որուն մնայուն կերպով կը հետեւէին:

«Սկաուտական տարիներու ամբողջ շրջանին մենք սորվեցանք սկաուտական գիտելիքներ», ըսաւ ան՝ աւելցնելով, որ ինք սկաուտական երէցական փաղանգի խմբապետութիւնը ստանձնած է չորս տարի:

«Երէցներուն թիւի բարձրացումը եւ անոնց աշխոյժ, կարգապահ ու պարկեշտ շարքերը հմայեցին վարչութիւնը, իսկ լիբանանահայ ընկերութիւնը անոնց մասին մեծ գոհունակութեամբ արտայայտուեցաւ», նշեց եղբ. Կիլպչենկեան:

Ան աւելցուց, որ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին մէջ իբրեւ Սկաուտ-Խորհուրդի անդամ երկար ատեն աշխատելէ ետք, 1969-ին կ'ընտրուի վարչութեան անդամ եւ երկու շրջանի համար գործէ նոյն վարչութեան մէջ:

Եղբ. Կիլպչենկեան մաս կազմած է նաեւ Լիբանանի Շրջանային Սկաուտ-Խորհուրդին, իսկ 1976-ին ընտրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան անդամ՝ մնայուն կերպով կապը դառնալով սկաուտական աշխատանքներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան անդամակացութեան վերջին նստաշրջանին, Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Կեդրոնական

«Երէցներուն թիւի բարձրացումը եւ անոնց աշխոյժ, կարգապահ ու պարկեշտ շարքերը հմայեցին վարչութիւնը, իսկ լիբանանահայ ընկերութիւնը անոնց մասին մեծ գոհունակութեամբ արտայայտուեցաւ», նշեց եղբ. Կիլպչենկեան:

Եղբ. Պատրիկ (ձախից) Լիբանանի կրթութեան նախարարը դիմաւորելու պահուն: Աջից՝ Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Խանճեան:



Վարչութեան անդամ եղբ. Բիւզանդ Թորիկեանի առաջարկով եղբ. Կիւլպէնկեան մաս կը կազմէ «Մարզիկ» ամսաթերթի յանձնախումբին: 1987-ին ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ, մէկ նստաշրջանի դադարէ ետք, դարձեալ կ'ընտրուի մինչեւ 2007 թուական:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամակցութեան ընթացքին եղբ. Կիւլպէնկեան սկստական աշխատանքներ տարած է եղբ. Կարօ Թիւթիւնճեանի հետ, եւ մինչեւ օրս կ'աշխատի «Մարզիկ» ամսաթերթին հետ:

Իր յուշերուն մասին խօսելով՝ եղբ. Կիւլպէնկեան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը եղած է իր երկրորդ ընտանիքը: «Երբ երէց էի, նահր Իպրահիմ ուղղուեցանք արշաւի: Իրրեւ պատասխանատու՝ ես տղոց կը թելադրէի, որ հեռու մնան գետեզերքէն, երբ յանկարծ իմ ոտքս սահեցաւ եւ ես գետ ինկայ, այդ վայրկեանին բոլոր տղաքը ամէն ճիգ կատարեցին, որպէսզի զիս ազատեն. անոնք չէին գիտեր, որ ես լողալ գիտէի: Ինծի համար այդ դէպքը շատ տպաւորիչ էր, որովհետեւ հոն է, որ ես զգացի, թէ Հ.Մ.Ը.Մ-ականը որքան ընկերասէր է եւ մէկգմէկու օժանդակելու յանձնառութիւնը ունի», շեշտեց ան:

Եղբ. Կիւլպէնկեան հաստատեց, որ իրեն համար հաւատք եւ համոզում է, որ Հ.Մ.Ը.Մ-ականը գորաւոր կամքի տէր մէկն է, որ յուսահատիլ չի գիտեր:

«Իմ յուշերէս ինչ որ ալ պատմեմ պատմութեան սահմաններուն մէջ պիտի ըլլայ եւ ոչինչ պիտի բերէ Հ.Մ.Ը.Մ-ին, որ 95 տարիէ ի վեր ապրած է՝ հակառակ բոլոր տեսակի դժուարութիւններուն: Սակայն այս օրերուն Հ.Մ.Ը.Մ-ական երիտասարդը պէտք է գիտնայ եւ լաւ ըմբռնէ, որ գալիք օրերուն Հ.Մ.Ը.Մ-ի բարգաւաճումը շատ կարեւոր է: Հ.Մ.Ը.Մ-ականը պէտք է գիտնայ, որ Հ.Մ.Ը.Մ-ը ոգի է եւ ապրում, որ միշտ վառ պէտք է պահել, այլապէս կարելի չէ տոկալ ու ծառայել Հ.Մ.Ը.Մ-ին: Դժուարութիւններ կան, սակայն զանոնք յաղթահարելու համար հզօր կամք պէտք է, որպէսզի կարելի ըլլայ միութեան զանազան մարզերը բարգաւաճ եւ յուսատու դարձնել», շեշտեց եղբ. Կիւլպէնկեան:

Հ.Մ.Ը.Մ-ի ներկայի շարքերուն ուղղելով իր խօսքը՝ ան դիտել տուաւ, որ միշտ պէտք է աւելին ձգտիլ եւ հեռանալ օտարամոլութենէ, իսկ արդիականացման այս դարէն պէտք է օգտուիլ՝ յառաջդիմելու եւ ոչ թէ ճամբէ շեղելու համար:

«Հ.Մ.Ը.Մ-ը պահողը ազգային զգացումն է եւ ոգին, ոչ թէ սկստական գիտելիքները: Եթէ ոգի չկայ, Հ.Մ.Ը.Մ. չկայ, այլ՝ մեքենայականացած կեանք մը», ըսաւ ան:

«Մարզիկ» ամսաթերթի շրջագիծին մէջ իր աշխատանքին եւ քառորդ դարու փորձառութեան մասին խօսելով՝ եղբ.



1981. Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան կազմը: Ոտքի, ձախէն աջ՝ եղբայրներ Րաֆֆի Գատեան, Ժան Ապաճեան, Պետրոս Շեմմեսեան, Պատրիկ Կիւլպէնկեան եւ Արա Յակոբեան:

Նստած, ձախէն աջ՝ եղբայրներ Վարդգէս Յայրապետեան, Նշան Պապիկեան, Ժողէֆ Նալպանտեան եւ Յովհաննէս Տէր Յարութիւնեան:

Կիւլպէնկեան շեշտեց, որ «Մարզիկ»ը դաստիարակիչ դերակատարութիւն ունի հայ մարզական գրականութեան մէջ: Ան աւելցուց, որ ամսաթերթին մէջ ազգային եւ միութենական շունչը մնայուն ներկայութիւն է՝ աւելցնելով, որ «Մարզիկ»ը մարզական եւ սկստական աշխատանքներուն ցոլացումն է:

Ան նկատել տուաւ, որ հակառակ «Մարզիկ»ի դիմագրաւած դժուարութիւններուն՝ ոչ մէկ ճիգ խնայուած է «Մարզիկ»ը աշխարհի բոլոր կողմերը հասցնելու համար: «Իրրեւ Հ.Մ.Ը.Մ-ական պէտք է հետեւողական ըլլալ «Մարզիկ»ին հետ կապը պահելու իմաստով», ընդգծեց ան:

Վաստակաշատ եղբ. Պատրիկ Կիւլպէնկեան Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին իր ծառայութիւններուն համար արժանացած է երեք շքանշանի. «Արժանեաց» շքանշան՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ (2008), Լիբանանի կրթութեան նախարարութեան շքանշան, (2006) եւ Լիբանանի սկստական ֆետերասիոնի շքանշան (2001):



Եղբ. Պատրիկ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ սկստական ֆետերասիոնի շքանշանները ստացած պահուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ «ԷՓ»Ը

Թղթակից
ԻԿԸԼ ՈԱՔ



28 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու ընտանիքը բացայայտեց արդիական հեռահաղորդակցութեան համար օգտագործուող իր «էփ»ը (APP), որ տրամադրելի է «էփըլ» եւ «էնտրոյտ» հեռաձայններու ու այլ սարքերու համար:

Հայաստանի առաջին հանրապետութեան անկախութեան 95-ամեակին առիթով կատարուած այս հրապարակումը իրականացաւ «OGMA, Inc.» ընկերութեան կողմէ, որ 2000-էն ի վեր կը գործէ Հայաստանի մէջ եւ որուն հիմնադիրն է Հ.Մ.Ը.Մ.՝ական եղբ. Հարմիկ Պաղտասարեանը: «էփ»ը կարելի է օգտագործել Հ.Մ.Ը.Մ.Ի Նաւասարդեան 38-րդ խաղերուն մասին նորագոյն տեղեկութիւններուն հետեւելու համար: Նաւասարդեան խաղերու կազմակերպիչ յանձնախումբի

ատենապետ եղբ. Մհեր Դաւիթեան կը յայտնէ, թէ «էփ»ին կարիքը զգացուած է յատկապէս Նաւասարդեան խաղերուն ընթացքին, երբ Հ.Մ.Ը.Մ.Ի անդամներն ու համակիրները միշտ կը փափաքին խաղերուն եւ անոնց զուգահեռ ընթացող այլ ձեռնարկներու մասին արագ տեղեկութիւններ ստանալ:

«էփ»ը կարելի է ձրիաբար ստանալ «Apple Store»էն կամ «Կուկըլ»ի «Play Store»-էն՝ փնտռելով «HOMENETMEN» բառը:

ՄՏԱՑԱՆՔ

THE ARMENIAN PRESS IN EGYPT

Bibliographical table

Compiled by

Dr. SOUREN N. BAYRAMIAN

Cairo-2013, Noubar Printing House



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.

Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱԲՈՐ ԱՐԵԻԵԼՔԻ ՄԷՉ (Բ. ՇՐՋԱՆ, 1931-1940)

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, Է. ՄԱՍ

Մ.Լ.Մ-ի վարիչներուն կը մնայ հետապնդել առաջադրուած նպատակը՝ յանգելու լաւագոյն հանգրուանին: Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Հ.Մ.Լ.Մ-ի դրօշին ներքեւ թէ այլ միութիւններու, ինչպէս նաեւ օտար հաստատութիւններու սեմերէն ներս, հայ ֆիզիքական ուժն է որ կը կրթուի եւ կը գրաւէ առաջնակարգ տեղ: Հալէպի մէջ կազմակերպուած «Միջ-դպրոցական մեծ դաշտահանդէսին, որ չորս յաջորդական տարիներէ ի վեր տեղի կ'ունենայ Ամերիկեան Գոլէճին կողմէ, այդ տարիներու ընթացքին հաստատուած մրցանիշները կը կտրուին միմիայն հայ մարզիկներու կողմէ... Գրեթէ բոլոր առաջնութիւն շահողները հայերը կ'ըլլան» («Ազդակ», 11 Մայիս, 1932): Իսկ 29 Մայիս 1932-ին, «Դամասկոսի հայութիւնը աննախընթաց օր մը կ'ապրի,- Ազգային ազատագրման տարեդարձի տօնակատարութիւնը, մեծ շուքով տօնուելէ ետք, նոյն օրը, յետմիջօրէին, Հ.Մ.Լ.Մ-ի առաջին խումբը Պէյրուսի Քլուպ-Սփորթիվի հետ կ'ունենայ մրցում մը, որուն ներկայ կ'ըլլայ Հ.Մ.Լ.Մ-ի Սուրիոյ եւ Լիբանանի պատուոյ նախագահ Գասպար Իփէկեան:

«Սփորթիվի խումբը, զօրացած Պէյրուսի Ամերիկեան Հա-

մալսարանի եօթը լաւ խաղացողներով, արդէն կը ներկայանար որպէս Պէյրուսի լաւագոյն խումբերէն: Շատ հետաքրքիր խաղ մը կը պարզուի հանդիսատեսներուն առջեւ, որոնք հեւ ի հեւ կը հետեւին խումբերու միջեւ տարուբերուող զնդակին: Հ.Մ.Լ.Մ-ի տղաքը ցոյց կու տան բացառիկ ճիգ ու կը յաղթեն... տղոց յաղթանակը մեծ խանդավառութիւն ստեղծեց Դամասկոսի մէջ, մանաւանդ օրուան տօնական հանգամանքով» («Ազդակ», 8 Յունիս 1932): Սերունդին փրկութեան գործին նուիրուած Հ.Մ.Լ.Մ-ի վարիչները, Պէյրուսի մէջ, անգամ մը եւս պիտի դիմէին հայ ծնողներուն իրենց կոչով:-

«Հ.Մ.Լ.Մ-ի Պէյրուսի մասնաճիւղս նոր թափով գործի լծուած է, վերակազմելու, Պէյրուսի մէջ, հայ սկաուտական կազմը, որ պիտի գտնուի Սկաուտական Խորհուրդի եւ կարող խմբապետի մը խնամքին տակ:

«Այս առթիւ կոչ կ'ընենք հայ ծնողներու, որ գնահատելով արժէքը մեր այս ջանքին, չզլանան մեր գործովալի խնամքին յանձնելու իրենց պատանի տղաքը:

«Մարդ դառնայր արուեստ մըն է, մենք պիտի ջանանք այդ արուեստը անոնց սորվեցնել:

«Քաղաքներու ապականած մթնոլորտէն հեռու, բնութեան կապուած, մեր կարելին ի գործ պիտի դնենք անոնց տալու առողջ մարմին, ազնիւ բնաւորութիւն եւ ուշիմ միտք:

«Մենք կը հաւատանք որ միայն սկաուտական դպրոցին մէջ պատանին առիթը ունի սորվելու՝ ըլլալ ինքն իր կամքին տէր, ժուժկալ, ինքնավստահ, տոկուն եւ խիզախ: Հաւատացած ենք, որ նախ սկաուտական շարքերուն մէջ ան պիտի իւրացնէ ձեռներէցութեան եւ համագործակցութեան յատկութիւնները:

«Ամէնէն մեծ առաջնորդը՝ սկաուտին մօտ պատուոյ ըմբռնումն է եւ իր պատուին համար ան այնքան նախանձախնդիր է, ինչպէս ասպետ մը- այսպէսով ան կ'արժանանայ բոլորին վստահութեան ու մեծարանքին:

«Ասոնց զուգընթաց, անոր մէջ կը զարգանայ մարդասիրութեան ու հայրենասիրութեան զգացումը: Եւ ասոնց համար ան ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ է:

«Սկաուտ մը կ'իւրացնէ այն ինչ որ իսկական տղամարդուն է ՄԵԾ ԿԱՄՔ, ՄԵԾ ՍԻՐՏ, ՄԵԾ ՀՈԳԻ:



1960, Զալէպ, միջ-մասնաճիւղային խաղերու տողանցք:



1949, Հայկաի քաղաքապետարանի դաշտ. աջն երկրորդը եղբ. Երուանդ Տեմիրճեան:

«Ուրեմն սիրելի ծնողներ, աջակից եղէք մեզի՝ մեր մատաղ սերունդին բնածին ընտիր ատաղձը ձեւակերպելու որպէս ընդունակ հայեր, - արժանաւոր գաւակներ մեր ազնիւ, կենսունակ ու դիւցազնական ցեղին» («Ազդակ», 21 Յունիս 1931):

Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի վարչութեան նամակը՝ ուղղուած Շրջանային Վարչութեան 25 Մայիս 1932-ին, որով կը յայտնէր կարգ մը Հ.Մ.Ը.Մ-ականներու վտարումի որոշումը, Շրջանային Վարչութիւնը յետ քննութեան կ'եզրակացնէ. «Ժողովը լսեց պրն. Ալպէր Յակոբեանի գեկուցումը: Միաձայնութեամբ վաւերացուց միութենէս արտաքսումը՝ Պրնք. Յակոբ Աճէմեանի եւ Եփրեմ Էլէզեանի: Գալով Շաւարշին տուաւ հետեւեալ որոշումը.

«Յանցաւոր է եւ պիտի պատժուի, բայց նկատի առնելով որ Շաւարշը մինչեւ այսօր եղած է լաւ Հ.Մ.Ը.Մ-ական մը եւ բնաւ նման յանցանքի մէջ չէ գտնուած եւ որ ինք կ'ընդունի իր յանցանքը, պատիժը կը փոխուի կախակայման՝ երկու ամիսով» (օրագր. 9 Յունիս 1932):

Թրիփոլիէն 8 Յունիս 1932 թուակիրով, կը հաղորդեն տեղւոյն մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովի գումարումը, ջերմ միջնորդի մէջ եւ ընտրութիւնը նոր վարչութեան հետեւեալ կազմով՝ Հայկազ Աթմաճեան, Բենիամին Մինասեան, Մանուկ Չալեան, Միսաք Ալպոզգանեան, Վարուժան, Ռուբէն Հայրապետեան, Արիս Աթմաճեան: Դամասկոս եւս իր նորընտիր կազմը կը ներկայացնէ Շրջանային Վարչութեան՝ վաւերացուելու համար: Դամասկոսի նորընտիր վարչութեան մաս կը կազմեն՝ Վահան Տօնապետեան, Պերճ Կարապետեան, Մ. Ատալեան, Յովհ. Պոյաճեան, Յովհ. Թնճուկեան: Իսկ Պէյրու-

սի մասնաճիւղի նորընտիր վարչութեան անդամներն են՝ Օննիկ Պէօճէքեան, Սարգիս Ուրֆալեան, Պօղոս Շահինեան, Օննիկ Փիլիկեան, Կարապետ Մերտինեան, Արտաւազդ Հաճեան եւ Ֆերտինանտ Քեւեայեան:

Նորընտիր բոլոր վարչութիւններն ալ գօտեպնդուած Հ.Մ.Ը.Մ-ականի ոգիով, կը լծուին շինարար աշխատանքի: Պէյրուսի վարչութիւնը իր առաջին նիստին իսկ կ'որոշէ՝

ա. Արշաւ դէպի Նահր Իպրահիմ:

բ. Մարմնի գեղեցկութեան մրցում կատարել:

գ. Հալէպ-Պէյրուս ֆուտպոլի մրցումը անպայման յաջողցնել աշնան, անմիջապէս որ ֆուտպոլի եղանակը կը սկսի:

Սկառուտներու համար, արդէն ծրագրուած կանոնաւոր դասաւանդութիւններու

կը սկսի: Վարչութիւնը պաշտօնի կը կանչէ նաեւ Տ. Պալպալեան, Բ. Մխսաւետիքեան, Խ. Երէցեան՝ կազմելու դաշտի յանձնախումբը, իսկ Մ. Ծամբուլեան ու Յ. Հացագործեան՝ ֆուտպոլի յանձնախումբը:

Հալէպէն Շրջանային Վարչութեան հասած նամակները կը բացատրեն «իրենց դժուարին կացութիւնը», յառաջ եկած վարչութեան եւ «անդամներու միջեւ գոյացած անհամաձայնութենէն»: Շրջանային Վարչութիւնը, խնդիրները տեղւոյն վրայ քննելու բժախնդրութենէն մղուած, կ'որոշէ լիազօր մը դրկել (Շրջանային Վարչութեան օրագր. 24 Յունիս 1932):

Հալէպի մէջ կը կայացուի անդամական ընդհանուր ժողով: Հոն հարցերու մանրամասն քննութենէ կտք, կ'ընտրուի նոր վարչութիւն, որուն մաս կը կազմեն՝ տղքթ. Ատուր Գապագեան, Տղքթ. Յակոբ Գասպարեան, Վարդան Ազիրեան,



1960. Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ ֆուտպոլի խումբը:

Միսակ Պրժեան, Լեւոն Մուրատեան, Յարութիւն Խաչատուրեան:

Նորընտիր վարչութիւնը, իրեն փոխանցուած առկախ գործը՝ Անտիոք ղրկելու պահեստի խումբը, տեղւոյն մասնաճիւղի խումբին հետ մրցելու, կը գրէ նաեւ Դամասկոսին՝ հոն ղրկելու համար սկաուտական Ա. խումբը: Գործերը լաւ հիմերով եւ ծաւալուն կերպով տանելու մտօք, վարչութիւնը յանձնախումբեր կը նշանակէ.

ա. Թենիս՝ Միսաք Պրժեան, Չարեհ Ճերահեան, Գրիգոր Չափրաստեան, Կարապետ Աղճեան, Հայկազն Անտոնեան:

բ. Դաշտ եւ ակումբ՝ Խորէն Հելվաճեան, Նշան Թիւսիւզեան, Անդրանիկ Աթթարեան, Նիկողոս Փիլաւեան, Անդրանիկ Գափլանեան:

գ. Սկաուտական եւ մարմնամարզ տոքթ. Ա. Գապագեան, Կոպեռնիկ Մանսուրեան, Նշան Թիւսիւզեան, Տիգրան Յովակիմեան:

դ. Ֆուտպոլ՝ տոքթ. Յ. Գասապեան, Լեւոն Մուրատեան, Չարեհ Պատիկեան, Հրայր Երկաթունի, Գրիգոր Իւլէպէյեան, Նիկողոս Փիլաւեան:

Հալէպի սկաուտական խումբը Դամասկոս չ'երթար. նոր կարգադրութեամբ, Դամասկոս կը ծրագրէ Հալէպ գալ: Սակայն Հալէպի պահեստի խումբը Անտիոք կ'երթայ: Այս այցելութեան մասին կը կարդանք «Ազդակ»-ի 23 Յուլիս 1932-ի համարին մէջ:

«Ասկէ մօտ երեք ամիս առաջ, ընդամէնը 15 անդամներով, կազմուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը. ընտրեց իր անդրանիկ վարչութիւնը: Առաջին անգամ վարչութիւնը յարաբերութեան մէջ մտաւ Հալէպի հետ եւ ապա Շրջանային Վարչութեան, պաշտօնապէս վաւերացուելէ ետք, գտաւ խաղափայր ու սկսաւ կանոնաւոր փորձերու: Հակառակ տեղի ունեցող

1947. Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի ֆուտպոլի խումբը:



բազմաթիւ դժուարութիւններուն, պիտի ըսել որ շնորհիւ երկու անդամներու ժրաջան աշխատանքին, այս երեք ամսուան ընթացքին, ակնկալուածէն շատ աւելի յառաջդիմեց ու ամսոյս 17-ին, Կիրակի օր, ունեցաւ իր անդրանիկ մրցումը՝ Հալէպի Հ.Մ.Ը.Մ-ի երկրորդ խումբին հետ:

«Հալէպէն 60-է աւելի Հ.Մ.Ը.Մ-կաններու ժամանումը, անոնց հիւրասիրութիւնը Տաֆնէի ջրառատ պարտէզներուն մէջ, մինչեւ կէսօր, Հ.Մ.Ը.Մ-ական ջերմ մթնոլորտ մը կը ըստեղծէ փոխադարձ ծանօթութիւններու: Կէսօրէ ետք, հսկայ բազմութեան մը ներկայութեան, ուր աչքի կը գարնուէին գայմագամը, Փրանսացի սպաներ, պաշտօնեաներ եւ երեւելիներ: Մրցումը տեղի կ'ունենայ յարուած խաղարկութեամբ մը, որ կը վերջանայ ի նպաստ Անտիոքին:


«Անտիոքի մարզիկներուն այս առաջին մրցումը եւ յաղթանակը մեծ գրաւական մըն է իրենց յառաջդիմութեան:

Երանի թէ վարչութիւնը եւ անդամները, որոնց թիւը 30-ի բարձրացեր է, չկորսնցնեն իրենց աշխատանքի թափը, ու խումբերը հասցնեն Հ.Մ.Ը.Մ-ի արժանի բարձրութեան մը»: Անտիոք այս յաջողութենէն քաջալերուած՝ կը գրէ Ալեքսանտրէթ եւ կ'առաջարկէ մրցում մը ունենայ, նկատելով որ «այս ընկերային մրցումը թէ ձեր եւ թէ մեր շրջանին համար քաջալերական քայլ մըն է. Հ.Մ.Ը.Մ-ի գոյգ մասնաճիւղերուն ալ փայլ մը տուած կ'ըլլանք»:

Հալէպի վարչութիւնը տարեկան իր ողիմպիականի պատրաստութեան համար կը կազմէ յանձնախումբ, որուն մաս կը կազմեն՝ Կոպեռնիկ Մանսուրեան, Չարեհ Ճերահեան, Կարապետ Աղճայեան, Անդրանիկ Աթթարեան, Հրանդ Տէտէեան: Մինչ ողիմպիականի պատրաստութիւնը, վարչութիւնը շարժանկարի երեկոյթ մը



1949, Հալէպ. Միջ-մասնաճիւղային խաղերու տողանցք:



կու տայ, անդամավճարները կը հետապնդէ, կ'օժանդակէ Ալեքսանտրէթին՝ պետական արտօնագիրի համար ու կը պատրաստուի 50 սկաուտներու երդման արարողութեան: Այս մասին կը գրէ Շրջանային Վարչութեան.

«Սկաուտներու երդման արարողութիւնը որոշուեցաւ կատարել 27 Նոյեմբերի Կիրակի օրը, մանկապարտէզի սրահին մէջ, նոյն օրը տօնել նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի օրը»:

Մուսուլյն, Յակոբ Բենճոյեան, Հալէպի մասնաճիւղին կը գրէ, որ 25 երիտասարդներ մէկտեղուած՝ կը փափաքին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ հիմնել, ուստի Հալէպէն կը խնդրեն աջակցութիւն, միութեան կանոնագիր, նաեւ կը փափաքին կապուիլ Հալէպին»: Հալէպ անմիջապէս կանոնագիր մը կը ղրկէ Մուսուլ, «Իսկ վարչական հարցերը կը թողու Շրջանային Վարչութեան», որուն կը գրէ Հալէպ, ներփակելով Մուսուլի նամակը (Հալէպի ատենագրութիւն, 22 Նոյեմբեր 1932):

Պէյրութի վարչութիւնը օրակարգի վրայ ունի շարժանկարի երեկոյթ Լ.Օ.Սաչին հետ, դասախօսութիւններ, դաշտը եւ մանաւանդ թենիսի դաշտին պարագան, որուն համար կը գումարելի խորհրդակցական ժողով՝ 15 Նոյեմբերին. «Միութեան պատուոյ նախագահ պրն. Գասպար Իփէկեան խոստացաւ գտնել հարկ եղած գումարը երբ նպատակին յարմար դաշտը գտնուի» (Ատենագրութիւն 13 Նոյեմբեր 1932):

Շրջանային Վարչութիւնը Նոյեմբերի կիսուն ծանր կացութեան մը կը մատնուի. «Ժողովս նկատի առնելով

որ արդէն լրացած է Շրջանային Վարչութեան ժամանակը եւ թէ վարչութեան անդամներէն տոքթ. Պէյզեան տեղափոխուած է Պաղատ, նոյնպէս Հայկ Քալենտէր, անձնական գործի բերումով քաղաքէն միշտ կը բացակայի նաեւ Գէորգ Սազճեանը, ժողովս որոշեց չըջաբերականով իմացնել բոլոր մասնաճիւղերուն Պատգամաւորական ժողովի անհրաժեշտ գումարումը: Այս պարագային երբ դժուարութիւններ կան, մասնաճիւղերը ի վիճակի չեն մասնակցելու Պատգամաւորական ժողովին, իրաւասութիւն պէտք է տան ներկայ Շրջանային Վարչութեան, որ պատուակալ նախագահին հետ համախորհուրդ լրացնէ իր կազմը»:

Մինչ այդ, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, գեղեցիկ օր մը կ'ապրի 4 Դեկտեմբեր 1932-ին: Աւելի քան 50 նորընծայ սկաուտներ կու գան հպարտ ու գուարթ, իրենց երդման արարողութիւնը ընելու

Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին ներքեւ՝ «մնալու հաւատարիմ հայրենիքին, ազգին, դրօշին, լեզուին»: Դժբախտաբար հանդիսասրահին պատերը նեղ կու գան պարփակելու բոլորը, ուստի վարչութիւնը իր 27 Դեկտեմբերի նիստին կ'արձանագրէ. «Նկատի ունենալով որ սկաուտներու երդման արարողութեան եւ միութեան օրուան տօնակատարութեան հանդիսութեան մասնաճիւղի անդամներէն շատերը սրահին փոքրութեան պատճառաւ զրկուեցան, վարչութիւնս որոշեց Մնունդի երրորդ օրը գուտ անդամական ու քիչ թուով համակիրներու համար երեկոյթ մը սարքել»:

Շրջանային Վարչութեան Պատգամաւորական ժողով գումարելու առաջարկին, մասնաճիւղերը կը լիազօրեն Շրջանային Վարչութիւնը, որպէսզի յարմարագոյն անձերով



1961. Գահանգային խաղերու առաջնութիւնը շահած Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ ֆութպոլի խումբը:

լրացնէ իր կազմը: Ասոր վրայ Շրջանային Վարչութիւնը իր 10 Յունուար 1933-ի նիստին կ'որոշէ հրաւիրել տոքթ. Բենիամին Գուլազեանը եւ Յովհաննէս Շահինեանը, շրջանի պատուակալ նախագահ պրն. Գասպար Իփէկեանին հետ խորհրդակցելէ ետք:

Շրջանային Վարչութեան այս նիստի օրակարգի կարեւոր խնդիրներէն մէկը կը կազմէ նաեւ «Միջազգային առժամեայ մարմնի մը կողմէ ֆութպոլի եւ զանազան մարզական ճիւղերու համար ֆետերասիոն մը կազմելու հրաւերը: Վարչութիւնս որոշեց մասնակցիլ այդ ժողովին եւ աշխատիլ մեր իրաւունքները արժեցնել հոն, իբրեւ մարմնակրթական կազմակերպուած միութիւն»: Այս առթիւ կը հրահանգուի տեղական վարչութեան որ նմանապէս հրաւեր ստացած էր, գործէ համախորհուրդ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Խորէն Սուքիասեանին հետ:

Շրջանային Վարչութիւնը խոր վիշտով կ'իմանայ իր անդամներէն Հայկ Քալենտէրի մահը, տեղի ունեցած Հալէպի մէջ: Վարչութիւնը կ'որոշէ «Ազդակ» եւ «Յառաջ» թերթերուն մէջ մահազոյով իր ցաւակցութիւնը յայտնել:

31 Յունուար 1933-էն սկսեալ տոքթ. Գուլազեան եւ Յովհաննէս Շահինեան կը մասնակցին Շրջանային Վարչութեան նիստերուն: Անոնց յաւելումով վարչականներու պաշտօնը կը դասաւորուի հետեւեալ կերպով.-

- Ատենապետ- տոքթ. Բ. Գուլազեան
- Ատենադպիր - Ս. Բաբախեան
- Գանձապահ - Խ. Սուքիասեան
- Հաշուակալ - Ա. Յակոբեան
- Մարզիկ խմբապետ - Յ. Շահինեան
- Սկաուտ խմբապետ - Ս. Թերճանեան

Լաթաքիան կը ներկայացնէ մասնաճիւղին վարչական նոր կազմը՝ Միսաք Շիրոյեան, Տիգրան Արզարեան, Մերուժան Փաշապէզեան, Կարապետ Ուղուրլեան, Հայկ Ղազարեան, Իսահակ Թորոսեան, Գրիգոր Զպուքճեան, ու նոյն ատեն կը խնդրէ «գայլիկներ» պատրաստելու համար գրաւոր հրահանգներ ու ծանօթութիւններ»:

1933 Յունուարին կը պատահի Պէյրութի Ս. Խաչ քէմփի աղէտը: Մէկ գիշերուան մէջ բազմահազար ժողովուրդ, ձմեռ ատեն, կը մնայ բաց երկինքի տակ, անպատսպար. հրդեհը կը լափէ ամէն բան: Այս աղէտին առջեւ, բազմաթիւ այլ կազմակերպութիւններու կարգին, Հ.Մ.Ը.Մ-ը անտարբեր չէր կրնար մնալ: Շրջանային Վարչութիւնը կ'որոշէ «շրջաբերականով մը իմացնել ու հրահանգել բոլոր մասնաճիւղերուն, որպէսզի Պէյրութի աղէտեալներուն համար գրաւոր ղիմում կատարեն իրենց տեղական Ազգ. իշխանութիւններուն կամ այդ նպատակով կազմուած յանձնախումբերուն եւ յայտնել ու տրամադրել իրենց պատրաստակամ աջակցութիւնը

1959-ի միջ-մասնաճիւղային խաղերէն:



անոնց հրահանգներուն: Եւ կամ իւրաքանչիւր մասնաճիւղ իր կարելիութեան եւ ուժերուն ներած շափով իր օժանդակութիւնը բերէ աղէտեալներու օգնութեան գործին»:

Հալէպէն, Կիւլպէնկեան վարժարանի հոգաբարձութիւնը նամակով մը «կը խնդրէ անդամակցիլ Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին իբրեւ առանձին մասնաճիւղ, կապուելով միայն Շրջանային Վարչութեան հետ»: Վարչութիւնը շնորհակալական գիր մը ղրկելով «կը յայտնէ թէ եղած առաջարկը առանձին քննութեան կը կարօտի»:

Շրջանային Վարչութիւնը իր 21 Փետրուար 1933-ի նիստին կ'որոշէ գրել Հալէպի Կիւլպէնկեան վարժարանի հարցէն գատ նաեւ «միջ-մասնաճիւղային մրցումներուն համար այն դժուարութիւնները, որոնց կարելի է հանդիպիլ, եւ այդ առթիւ հոն հաւաքուելիք սկաուտներուն համար իրենց կարելի դիւրութիւնները՝ ըլլայ սնունդի եւ թէ պառկելու»: Այս ժողովը հարկ կը տեսնէ դարձեալ շրջաբերականով իմացնել որ «Միջ-մասնաճիւղային մրցումները տեղի պիտի ունենան Զատիկին, վայրը՝ Հալէպ, Շրջանային Վարչութիւնը կը ըստանձնէ խումբերու սնունդի եւ պառկելու ծախսերը»: Ասկէ գատ կը հրահանգուի մասնաճիւղերուն՝ իրենց պատգամաւորները ընտրել, որովհետեւ մրցումներուն զուգընթաց տեղի պիտի ունենայ նաեւ Պատգամաւորական ժողով:

Պէյրութի վարչութիւնը, մասամբ իր պահեստի խումբին փափաքին գոհացում տալու, քոյր մասնաճիւղ Թրիփոլիին օգտակար հանդիսանալու, մանաւանդ բարոյական գեանի վրայ, Թրիփոլի կը ղրկէ պահեստի խումբը, որ ջերմ ընդունելութեան կ'արժանանայ Թրիփոլիի Հ.Մ.Ը.Մ-ականներուն կողմէ:

(Շար. 7)



ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ 2013-2014 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԵՄԻՆ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Ինչպէս ամէն տարեշրջանի սկիզբը, այս տարի եւրոպական մեծ երկիրներու ակումբները լծուած են նոր մարզիկներ «որսալու» աշխատանքին: Անոնք անգամ մը եւս բաւական լայն բացած են իրենց քսակները՝ լաւագոյնները ձեռք ձգելու եւ աւելի լաւ արդիւնքներ արձանագրելու հեռանկարով:

Անգլիոյ մէջ, Ֆերկլսընի հեռանալէն ետք, ախոյեան Մանչեսթըր Եունայթըտ պիտի փորձէ նոյն արդիւնքները արձանագրել: Թէ՛ համակիրները եւ թէ՛ մրցակիցները անհամաբեր են տեսնելու Եունայթըտը առանց Ֆերկլսընի: Երկրորդ կարեւոր իրադարձութիւնը ժողէ Մորինիոյի վերադարձն է Չելսի: Ռէալի հետ չյաջողած եւ Անգլիոյ մէջ միշտ խնդրայարոյց իր յայտարարութիւններով ծանօթ Մորինիոն այս անգամ յոյսով է որ պիտի շահի այն ինչ որ Ռէալի հետ չկարողացաւ: Արսենալ, Լիվըրփուլ,

Մանչեսթըր Սիթի, Էվըրթըն եւս լծուած են նորեկներով համալրելու իրենց կազմերը: Կ'ենթադրուի որ այս տարի Անգլիոյ ախոյեանութեան մրցակցութիւնը ըլլայ աւելի սուր եւ միաժամանակ քանի մը խումբերու միջեւ:

Սպանիոյ մէջ պատկերը այլ է: Վերջին տասնամեակին մենաշնորհ հաստատած Պարսա եւ Ռէալ այս տարեշրջանին եւս կը թուի թէ ախոյեանութեան միակ թեկնածու-մրցակիցները պիտի ըլլան: Անցնող տարեշրջանին, Ռէալ ներքին վէճերու



պատճառով արձանագրեց ամօթալի արդիւնքներ եւ ախոյեանութեան ճամբան բացաւ Պարսայի առջեւ: Մորինիօ մեկնած է: Նոր մարզիչ Անճելոթի դժուար առաքելութիւն մը ունի: Ճիշդ է, որ ան ունի բաւական փորձառութիւն, սակայն Ռէյալի համակիրները պահանջկոտ են: Վարչական պատասխանատու նշանակուած Զիտան բաւական աշխատանք կը տանի կազմը երիտասարդ մարզիկներով ամբողջացնելու համար: Ախոյեան Պարսա եւս աշխատանքի մէջ է, մասնաւորաբար իր պաշտպանողականը զօրացնելու համար: Անցեալ տարի անոր աքիլէսեան կռուները՝ յետսպահ գիծը պատճառ դարձաւ «Զեմփիրնո Լիկ»-ի իր պարտութեան: Պարսա յաջողեցաւ պրագիցի յառաջապահ Նէյմարը միացնել իր կազմին: Վտանգաւոր այս յառաջապահը, Մեսսիի կողքին, լուրջ մտահոգութիւն է բոլոր խումբերուն համար: Աթլետիքօ Մատրիտ, Վալենսիա, Ռէյալ Մոսիէտատ եւ Սելիլա աշխատանքի մէջ են իրենց կազմերուն նոր մարզիկները միացնելու: Աթլետիքօ Մատրիտ կորսնցուց իր լաւագոյն յառաջապահը՝ Ֆալքաոն, որ ուղղուեցաւ Ֆրանսա:

Իտալիոյ ախոյեան Եռվենթուս այս տարեշրջանին եւս պիտի փորձէ անսխալական ըլլալ: Ան ունի քանի մը նորեկներ: Սակայն անոր մրցակիցները լաւապէս կը պատրաստուին զայն հանգիստ չձգելու համար: Նափոլի, որ անցեալ տարի Եռվէի գրեթէ միակ մրցակիցն էր, ճիշդ է որ կորսնցուց իր լաւագոյն յառաջապահներէն Քաւաննին, սակայն ձեռք ձգեց քանի մը նորեկ մարզիկներ: Ա. Սէ. Միլան անցեալ տարեշրջանի դարձի մրցումներուն ինքզինք գտաւ եւ յաջողեցաւ բարձրանալ վերի դիրքեր: Այս տարի ան իր համակիրներուն կը խոստանայ ախոյեանութեան սկիզբէն իսկ ըլլալ անսխալական: Միլանի երկրորդ կազմը ինթէր, Ա. էս. Ռո-



մա, Լացիօ եւս բաւական մեծ առեւտուրի մէջ են մարզիկներու շուկային մէջ:

Ֆրանսայի մէջ, ախոյեան Փարիզ Սէն ժերմէն կը մնայ ամէնէն ինքնավստահը: Մարզիչ Լորան Պլանի ժամանումը աւելի վստահութիւն կը ներշնչէ թէ՛ խումբին եւ թէ՛ համակիրներուն: Անոր մրցակիցն ու ռիսերիմ թշնամին Մարսէյը բաւական մեծ գումարներ կը տրամադրէ նորեկ մարզիկներու սակարանին: Լիոն, Մոնփելլիէ եւ մանաւանդ առաջին դասակարգ վերադարձած Մոնաքոյի կազմը բաւական մեծ գումարներ կը տրամադրեն անուանի մարզիկներ միացնելու իրենց կազմերուն: Այս բոլոր նախապատրաստութիւնները կը յուշեն, թէ Փարիզի կազմին համար այս տարեշրջանի ախոյեանութիւնը պիտի ըլլայ աւելի դժուար՝ քան անցեալ տարի:

Գերմանիոյ մէջ, բոլոր տուեալները ցոյց կու տան, թէ Պայէրնի տիրակալութիւնը պիտի շարունակուի այս տարի ալ: Ճիշդ է մարզիչ Հայնքէս մեկնած է, սակայն Միլնիխ ժամանած է սպանացի Փեփ Կուարտիոլան: Ան Պարսայի հետ տիրացաւ հնարաւոր բոլոր տիտղոսներուն, պիտի փորձէ նոյնը կրկնել Միլնիխի կազմին հետ: Պայէրնի կազմը պատրաստ է իր տիտղոսները պաշտպանելու եւ նորեր գրպանելու: Անոր մրցակիցներէն Տորթմունտ բաւական աշխատանք կը տանի իր կազմը աւելի զօրացնելու համար: Վերջերս անոր կազմին միացաւ հայազգի անուանի մարզիկ Հենրիխ Միլիթարեան: Շալքէ եւ Պայէրն Լեւերքուզը կը յուսան լաւ արդիւնքներ արձանագրել, սակայն դժուար թէ մտահոգեն Պաւարիոյ կազմը:





ՆՈՐԸՆՏԻՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցնող ամիսներուն, Շրջանային Ներկայացուցչական իրենց ժողովները գումարեցին եւ նոր Շրջանային Վարչութիւններ ընտրեցին Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի եւ Գանատայի շրջանները:

Ստորեւ՝ նորընտիր կազմերը իրենց պաշտօններու բաժանումով.

● ՀԱՐԱԲԱՅԻՆ ԱՍԵՐԻՎԱ

Եղբ. Արմանտօ Թորգոմեան-ատենապետ

Եղբ. Տանիէլ ճուպանեան-փոխ ատենապետ

Եղբ. Լուիս Կոստանեան-ատենադպիր

Եղբ. Վիսենթէ Յովասափեան-գանձապահ

Եղբ. Կուսթափօ Խաչատուրեան-փոխ գանձապահ

Եղբայրներ Արի Չարուկեան, Կիժերնօ Չէքեան, Յակոբ Յակոբեան եւ Սելբոն Սանդուրեան-խորհրդականներ

● ԳԱՆԱՏԱ

Եղբ. Տիրան Շահինեան-ատենապետ


Եղբ. Բաֆֆի Հատիտեան-ատենադպիր

Եղբ. Գրիգոր Ապրաքեան-գանձապահ

Եղբ. Սեւակ Քիւփէլեան-հաշուապահ

Եղբայրներ Ժանօ Սարխանեան, Բարգէն Կարապետեան եւ Սամսոն Քաիքէեան-խորհրդականներ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԱՄՆԱՃԻՒԴԻՆ ԵՌՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄԸ



Ներկայ մը ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ



Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի սկաուտներու դաստիարակչական ծրագրի ամբողջացման, սկաուտական կարեւոր գիտելիքներու եւ ձիրքերու փոխանցման նպատակով, եռօրեայ բանակում մը տեղի ունեցաւ 26-28 Ապրիլի շաբաթավերջը, «Զիլաու» բանակավայրին մէջ:

Օժանդակ մարմինի 5 անդամներու եւ խումբ մը նուիրեալ ծնողներու կողքին, բանակումին իրենց մասնակցութիւնը բերին վարչութեան երեք անդամներ՝ օժանդակելու համար խմբապետներուն: 60 սկաուտներ կը մասնակցէին բանակումին, որուն սկիզբը անոնք վրանները լարեցին: Ապա, խմբապետները դաստիարակչական նիւթեր փոխանցեցին սկաուտներուն, որոնք նաեւ առիթը ունեցան մասնակցելու քայարշաւներու:



Շաբաթ երեկոյեան տեղի ունեցաւ աւանդական խարուկահանդէսը՝ երգերով, կանչերով եւ ներկայացումներով հարուստ, հաճելի ու անմոռանալի պահեր ստեղծելով բոլորին համար:

Կիրակի առաւօտեան, սկաուտները իրենց կարգերը ստանալու համար մասնակցեցան քննութեանց:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 38-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՆ ՈՒ ՓԱՌԱՏՕՆԸ ՊՍԱԿՈՒԵՑԱՆ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

**Թղթակից
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ**

ՀՄԸՄԻ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ Նաւասարդեան մարզախաղերու յանձնախումբին ճիգերով 3-6 Յուլիսին տեղի ունեցան ՀՄԸՄԻ մարզախաղերն ու փառատօնը՝ Պրըմիերօնի Հայ Սքուլին մէջ, մասնակցութեամբ ՀՄԸՄԻ Գալիֆորնիոյ 18 մասնաճիւղերու մարզիկներու, ըսկառուներու, բոլոր տարիքի միութենականներու եւ ժողովրդային հոծ բազմութեան: Չորսօրեայ փառատօնին ընթացքին ՀՄԸՄ. յաջողեցաւ իր միութենական վահանին տակ համախմբել աւելի քան երեսունհինգ հազար հայեր, որոնք անգամ մը եւս եկան իրենց յարգանքն ու նուիրուածութիւնը յայտնելու Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան եւ անոր ազգանուէր գործունէութեան:

Չորս օրերու ընթացքին Հայ Սքուլի մարզադաշտերը յորդեցան խանդավառ մարզիկներով եւ գիրենք քաջալերելու եկած հարազատներու ներկայութեամբ: Պասքեթպոլ, Ֆուլթպոլ, վոլիպոլ, մէկ քայլ ոստում, լող, թենիս եւ փինկփոնկ՝ ահա՛ այն մարզախաղերը, որոնք կիրարկուեցան մեծ ոգեւորութեամբ:

Առաջին անգամ ըլլալով այս փառատօնը ընդգրկեց նաեւ մանկական յատուկ խաղավայր մը, ուր փոքրիկները առիթը ունեցան առաւելագոյն չափով գուարճանալու:

Ինչ կը վերաբերի մրցաշարքերու արդիւնքներուն, ապա պասքեթպոլի առաջնութիւնը իրեց «Արարատ» մաս-





նաճիւղը: Ֆուլթոնի մէջ առաջին հանգիսացաւ Լոս Անճելըսի մասնաճիւղը, վոլիպոլի Ա. դիրքը գրաւեց «Մասիս»ը, մէկ քայլ ոստումի առաջնութիւնը խլեց «Ազատամարտ»ը, լողի մէջ առաջնութեան տիրացաւ «Մասիս»ը, թենիսի մրցաշարքի աւարտին առաջին հանդիսացաւ «Սարգարապատ»ը, փինկ-փոնկի առաջնութիւնը խլեց «Արարատ»ը:

Փառատօնի իւրաքանչիւր գիշեր յատկանշուեցաւ գեղարուեստական յայտագիրով: Ամէն երեկոյ միջնորտը խանդավառեցին հայրենի եւ սփիւռքահայ հանրածանօթ երգիչներ, որոնք հանդէս եկան ժողովրդային, ազգային ու յեղափոխական շարք մը երգերով:

Չորսօրեայ փառատօնին ընթացքին, Հ.Մ.Ը.Մ-ի 18 մասնաճիւղեր, հայկական տարբեր հաստատութիւններ եւ ուստետեղէնի ներկայացուցիչներ մարզադաշտի համալիրին մէջ տեղադրուած կըրպակներու ճամբով մեծապէս նպաստեցին փառատօնին յաջողութեան:

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 38-րդ մարզախաղերուն նուիրուած փառատօնը յատկանշուեցաւ 18 մասնաճիւղերու տողանցքով: Տողանցքը եզրափակուեցաւ պաշտօնական բաժինով մը, որուն ընթացքին յաջորդաբար իօսքեր արտասանեցին Գայիֆօրնիոյ նահանգային խորհուրդի անդամ Փօլ Գրիգորեան, ոստիկանապետ Լի Պաքա, Միացեալ Նահանգներու ծերակոյտի անդամ Պրետ Շըրմըն, Նաւասարդեան յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Մհեր Դաւիթեան, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւիթեան եւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Մուշեղ Աբբ. Մարտիրոսեան, ի ներկայութեան փառատօնի պատուոյ նախագահ տէր եւ տիկին Սարգիս եւ Ալին Նուրբաններու, 2013-ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Ջարեհ Էքմէքճեանի, ինչպէս նաեւ՝ պաշտօնական հիւրերու, որոնց շարքին էին Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի հիւպատոս Արտակ Գալուստեան, Լիբանանի հիւպատոս ձոնի Իպրահիմ, Հ.Յ.Դ. Արեւմտեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Վիգէն Եագուպեան եւ շրջանի միութիւններու ու քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Տողանցքի աւարտին տեղի ունեցաւ հրավառութիւն: Յայտնեմք, որ առաջին անգամ ըլլալով Հ.Մ.Ը.Մ-ի 38-րդ մարզախաղերու տողանցքը ուղիղ եթերով սփռուեցաւ «US Armenia» պատկերասփիւռի կայանէն:





ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԻՍԸ

Նաևասարդեան 38-րդ մարզախաղերու յաղթանակի պարահանդեսը տեղի ունեցաւ Շաբաթ, 29 Յունիս 2013-ին, պատուոյ նախագահութեամբ տէր եւ տիկին Սարգիս եւ Ալին Նուրեաններու,

ներկայութեամբ աւելի քան 800 Հ.Մ.-Ը.Մ.ականներու եւ հիւրերու:

Երեկոն խանդավառեց գաղութի սիրուած երգիչ Յարութ Փամպուքեանը: Պարահանդեսին ընթացքին, «Տիպար Հ.Մ.-Ը.Մ.ական»ի պատուոյ գիրք յանձնուեցաւ եղբ. Զարեհ Էքմէքեան-

նին, մինչ Նուրեան ամուլին շնորհուեցաւ յատուկ գնահատագիր մը՝ տարիներու ընթացքին Հ.Մ.-Ը.Մ.ի մեծ ընտանիքին նկատմամբ ցուցաբերած անսակարկ նուիրումին եւ նիւթական օժանդակութեան համար:



PinkKimberley.com.au



Diamonds beyond rare



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ 23-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՊՍԱԿՈՒԵՑՄԱՆ ՓԱՅԼՈՒՄԻՆ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

Նայիրի Աղաճանեան
-Պայանեան
ՖԻԼՍՏԵԼՖԻԱ



Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանի միջ-մասնաճիւղային 23-րդ մարզախաղերը տեղի ունեցաւ 4-7 Յուլիս 2013-ին, «Էդբայրական սիրոյ քաղաքին» Ֆիլատելիոյ մէջ, հովանաւորութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Զորոյեանի, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութեան եւ հիւրընկալութեամբ Ֆիլատելիոյ մասնաճիւղին: Հ.Մ.Ը.Մ.Ի այս մարզախաղերու գլխաւոր նպատակն է համախմբել սկաուտներ, մարզիկներ եւ համակիրներ, որպէսզի ընկերական եւ Հ.Մ.Ը.Մ.ական ոգիով իրարու հետ մրցին, ուրախանան, նոր ծանօթութիւններ ու բարեկամութիւններ ստեղծեն եւ գիրար քաջալերեն, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.Ի նշա-

նարանը «Բարձրացիր-բարձրացուր»ն է:

Ֆիլատելիոյ այս տարուան մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերին շրջանի 9 մասնաճիւղերը.- Ալպրնի, Նիւ Եորք, Նիւ Ճորճի, Շիքակօ, Ուաշինկթըն, Պոսթըն, Տիթրոյիթ, Փրո-

վիտընս եւ Ֆիլատելիա:

Խումբ առ խումբ, մարզիկներ, ըսկաուտներ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի անդամները ժամանեցին օդակայանի «Մարիոթ» պանդոկը, ուր ներկայներուն շեշտուեցաւ կարգապահական օրէնքները, ներկայացուեցաւ յայտա-



գիրը, մասնակցող մասնաճիւղերու պատասխանատուներուն կողմէ:

23-րդ միջ-մասնաճիւղային խաղերը սկսան Յուլիս 4-ի, առաւօտեան ժամը 9-ին, «Ափրը Մէրիոն» բարձրագոյն վարժարանի համալիրի դաշտերուն, յողաւզանին եւ սրահներուն մէջ:

Խաղերը սկսան մեծ ոգելորութեամբ: Ֆուտպոլ, պասֆէթպոլ եւ վոլիպոլ, տարբեր դաշտերու եւ սրահներու մէջ: Մթնոլորտը միշտ ալ դրական եւ քաջայերական մնաց: Լողալու եւ վազքի մրցումներն ալ շատ հետաքրքրական էին:

Գնահատելի էր մարզախաղերու ծրագրման, կազմակերպման եւ գործադրման համար ճիգ չինայած Երջանային Մարզական Յանձնախումբը:

Աւելի քան 500 մարզիկ-մարզիկուհիներ, ծիլ, փոքր, կրտսեր, երէց ու վեթերան դասակարգերով իրենց մասնակցութիւնը բերին տարբեր մարզախաղերով, խմբային ու անհատական: Ուրախութիւնը ոգելորիչ էր, որովհետեւ վերջ ի վերջոյ յաղթականը Հ.Մ.Ը.Մ.՝ ական մըն էր:

Անձեր, որոնց կարելի չէ տեսնել հայկական որեւէ այլ ձեռնարկներու, կուզան եւ մարզախաղերու կը մասնակցին ու իրենց հայ ըլլալը կը յիշեն ու կը ըզզան: Այդ Հ.Մ.Ը.Մ.ի հմայիչ ոյժն է:

Յերեկային խաղերու գուգահեռ, կազմակերպուած էին երեկոյեան խրախմանքներ: Իսկապէս յատկանշական էր դիտել ամէն տարիքի երիտասարդներ, որոնք Յուլիս 4-ի երեկոյեան, մեծ հաճոյքով կ'ունկնդրէին եւ կը պարէին «Արցախ», «Տաշեղ» (A Splinter) եւ «Վիզա» խումբերու երգերը: Յայտագիրը շատ ճոխ ու մասնայատուկ էր:

Յուլիս 5-ի երեկոն վերապահուած էր Յարութ Փամպուլքճեանին, որ այնքան մեծ խանդավառութիւն ստեղծեց, որ նոյնիսկ անթացուպով երիտասարդներ պարեցին: Եւրջպարեր, հայկական անհատական ճարտար պարերու ոճեր... Ուրախութիւնը շատ մեծ էր:

Ամէն օր, եղբայրներ խորոված կը պատրաստէին, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի քոյրերը գայն կը ծախէին, այլ համեղ ուտելիքներու գուգահեռ: Նախաճաշի համար կար նշանաւոր ծոթրինով հացը: Նկատելի էր երիտասարդներուն եւ մա-





նուկներուն ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒՆԸ: Գրեթէ բոլորն ալ հայերէնով կը պատասխանէին իրենց ուղղուած հայերէն հարցումներուն: Այս ալ Հ.Մ.Ը.Մ-ի գործընթացներէն մէկն է: Բացայայտ էր Ֆիլատելֆիոյ քոյրերուն հիւրասիրութիւնն ու սիրալիր վերաբերմունքը:

Մարգարիտա Նախապետին օրը, Յուլիս 6-ին երեկոյեան, կրկին «Մարիոթ» պանդոկին մէջ, տեղի ունեցաւ Յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէս, ներկայութեամբ խումբներու բազմութեան: Պատուոյ սեղանին վրայ, Սրբազան Հօր կողքին, տեղ գրաւած էին Ֆիլատելֆիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ հոգեւոր հովիւ Ներսէս Ա. Քհնյ. Սանուկեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Յ.Գ-ի ներկայացուցիչ Բաֆֆի Յովակիմեան, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Աբգարեան, Ֆիլատելֆիոյ մասնաճիւղի ատենապետ եղբ. Արա Իշխանեան եւ խաղերու յանձնախումբի ատենապետուհի քոյր Ռիթա Տէկիրմէնճի:

Քոյր Նախապետ Փափագեան Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները երգելէ ետք, եղբ. Արա Իշխանեան շատ հարգատար զարուստի խօսքով եւ Հ.Մ.Ը.Մ-ականի պատշաճ ոգիով իրագործուած մրցումներուն եւ խաղերուն համար շնորհակալութիւն յայտնեց եւ շնորհակալութիւն յայտնեց: Ապա ան խօսք տուաւ



ՄԱՐԶԻԿ, 32ՐԿ ՏԱՐԻ, ԹԻՒՆ 4 (370)

կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն: Բոլորն ալ իրենց կարգին ջատագովեցին Հ.Մ.Ը.Մ-ի կատարած առաքելութիւնը եւ անդրադարձան միջ-մասնաճիւղային խաղերու շատ հեզասահ ընթացքին ու աւարտին:

Օրուան մեծագոյն անակնկալը Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնականի վարչութեան կողմէ պատուոյ «Արտակարգ» շքանշանի յանձնումն էր Առաջնորդ Օշական Արթ. Չորոյեանի, իր հայրական նուիրումին եւ Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ տածած սիրոյն եւ քաջաբերանքին համար: Սրբազանը փոքր տարիքին, Հալէպի մէջ, մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի սկստական շարքերուն:

Պահը շատ խորհրդաւոր էր, երբ Սրբազանը այս գեղեցիկ անակնկալին յուզուած, վերջիջ իր մանկութիւնն ու Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մարզախաղերը, ինչպէս նաեւ անոնց ազդեցութիւնն ու տպաւորութիւնը իր մանուկ եւ ապա՝ պատանի հոգիին վրայ: Ան ինքզինք միշտ ալ հպարտ Հ.Մ.Ը.Մ-ական մը նրկատեց:

Հրաւիրուած էր Ֆիլատելֆիոյ «Մեղրի» պարախումբը, որուն աղջիկները ներկաները հմայեցին իրեն հեզաճըկուն եւ քնքուշ պարերով:

Օրուան երգիչն էր Ֆիլատելֆիային Գէորգ Արթինեանը, որ գեղեցիկ կատարումներով ստեղծեց մեծ խանդավառութիւն:

Միջ-մասնաճիւղային խաղերը շատ հետաքրքրական ու հաճելի էին: Փութ-



ՄԱՐԶԻԿ, 32ՐԿ ՏԱՐԻ, ԹԻՒՆ 4 (370)




պոլի խաղերը ներկաները իրենց «մատերուն վրայ» պահեցին, իսկ պասքեթպոլը, պահեր եղան, որ մարզիկ շունչ չառին, որպեսզի հակառակ խումբին գնդակը իրենց կողմը չմտնէ: Շատ հետաքրքրական, գեղեցիկ ու տպաւորիչ էր մասնակիցներու հպարտութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի անդամակցելուն եւ մեծ պատիւով մարզախաղերուն մասնակցելուն համար, որովհետեւ խումբերէն ոմանք ունէին համալսարանաւարտ, բարձր պաշտօն ունեցող անձեր, որոնք սակայն ուրախութեամբ եւ հպարտութեամբ եկած էին մրցելու: Անհատական խաղերն ալ շատ հետաքրքրական ու քաջալերական էին:

Փակման հանդիսութիւնը սկսաւ Կիրակի, Յունիս 7-ին, կէսօրուան ժամը 12-ին, «Մարիոթ» պանդոկի մեծ սրահներէն մէկուն մէջ:

Շատ յուզիչ եւ հոգեպարար վայելք էր ականատես ըլլալ աւելի քան 500 սկաուտներու եւ մարզիկներու տողանցքին, շեփորախումբի նուագներու ընկերակցութեամբ:

Դրօշակակիրներու առաջնորդութեամբ, կարգով տողանցեցին շրջանի սկաուտական կազմերն ու մարզիկները: Շատ հետաքրքրական էր ու յուզիչ, երբ անոնց ետեւէն մուտք գործեցին խաղերու օգնականները, որոցմէ շատեր իրենց թոռնիկներուն՝ ապագայ Հ.Մ.Ը.Մ-ականներու ձեռքէն բռնած էին եւ շատ փոքր երեխաները գրկած: Փայլուն է Հ.Մ.Ը.Մ-ի ապագան:

Օրուան հանդիսավարն էր եղբ. Սարգիս Դրամկոչեան, որ ներկայացուց բարձրաճակատ ու հպարտ տողանցող մեր ապագայ սերունդը: Քոյր Նաթալի Փափագեան երգեց Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները, որմէ ետք խօսք տրուեցաւ Ֆիլատելֆիոյ մասնաճիւղի ատենապետ եղբ. Արա Իշխանեանին, որ իր շնորհակալութիւններն ու բարեմաղթութիւնները փոխանցեց ներկաներուն: Հրանդ Խաչատուրեան Հ.Ե.Դ-ի կողմէ փոխանցեց իր շնորհաւորութիւնները, որմէ ետք Շնորհիկ Գարագեւեան ՀՕՄ-ի շնորհաւորութեան կողքին՝ ընկերուհիներու պատրաստակամութիւնը յայտնեց միշտ զօրավիգ կանգնելու Հ.Մ.Ը.Մ-ի:



Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Արգարեան իր հայաշունչ պատգամը տուաւ, շնորհաւորեց ու քաջայերեց:

Ապա խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան: Եղբայրը շեշտեց, որ կարեւորը միութեան յաղթանակն է եւ ոչ թէ անհատականը... ձգենք մեր հետքը, փայլուն ապագայի հաշուոյն... Հ.Մ.Ը.Մ-ական ըլլալը գոհողութիւն է, սակայն հպարտութիւն ալ է: Եղբ. Մեսրոպեան յայտնեց, որ մայրուղիներէ ընթանալը աւելի դիւրին է, սակայն մայրուղիները անհատ մը տուն չեն տանիր, այլ՝ փոքր ճանապարհները կը տանին. ճանապարհներ, որոնք յաճախ փոշոտ ու քարքարոտ են, մեզ տուն կը հասցնեն: Նոյնպէս ալ կեանքի մէջ, դիւրին ձեւերը ճիշդ տեղը չեն հասցնիր մեզ. երբեմն դժուար ուղիներն են, որ մեզ կը հասցնեն: Փակման հանդիսութեան աւարտէն առաջ տեղի ունեցաւ բաժակներու բաշխում: Եղբ. Սարգիս Դարբինեան, Շրջանային

նի մարզական պատասխանատու, մեծ հպարտութեամբ բաժակները յանձնեց, նշելով որ շքանշաններն ու բաժակները ժամանակի ընթացքին փոշի կը հաւաքեն, սակայն յիշատակներն են, որ յաւերժ կը մնան: Եղբ. Արա Մարկոսեանի շրջուն բաժակը, որ «Լաւագոյն մարզական ոգին ունեցող մասնաճիւղին կ'երթայ, տրուեցաւ Փրովիտընս»-ի մասնաճիւղին, լողը՝ Ուաշինկթընին, վազքը՝ Ֆիլատելֆիոյ, կրտսեր տղոց պասքեթպոլը՝ Ֆիլատելֆիոյ, երէց տղոց պասքեթպոլը՝ Նիւ Ճըրզիի, վեթեւաններու պասքեթպոլը՝ Ֆիլատելֆիոյ, փոքր տղոց պասքեթպոլը՝ Նիւ Ճըրջիի, մանուկներու պասքեթպոլը՝ Ֆիլատելֆիոյ, մանուկներու ֆութպոլը՝ Ուաշինկթընի, երէց տղոց վոլիպոլը՝ Ուաշինկթընի, երէց աղջկանց վոլիպոլը՝ Նիւ Եորքի, երէց տղոց ֆութպոլը՝ Պոսթընի, «Ամէնէն բարեւաւուած





մասնաճիւղ»-ի բաժակը Ֆիլատելֆիոյ, իսկ «Ամէնէն շատ կէտեր հաւաքած մասնաճիւղ»-ի բաժակը՝ Ֆիլատելֆիոյ:

Մեծ հպարտութիւն եւ երջանկութիւն էր տեղեկանալ, թէ Արեւելեան Մ. Նահանգներու շրջանէն 51 մարզիկ-մարզիկուհիներ, իրենց 4 մարզիչներուն հետ, Յուլիս 24-էն Օգոստոս 4, Հայաստան պիտի այցելեն, մասնակցելու համար Հ.Մ.Ը.Մ-ական Գրգ մարզախաղերուն:

2014-ի միջ-մասնաճիւղային խաղերու հիւրընկալ մասնաճիւղն է Նիւ Եորքը, խաղերը տեղի պիտի ունենան Նիւ Եորքի մէջ:

Փակման հանդիսութեան աւարտին, հայրական իր շինիչ ու լաւատես պատգամը տուաւ Սրբազան Հայրը, որ աղօթքով աւարտեց հանդիսութիւնը:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabadoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Reservations

www.europehotel.am



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՀՈՒԱՆՏԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻ ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԻՆ



Թղթակից ԱՆՍԵԼՈ

Հոլանտայի Հայ Դատի գրասենեակի կազմակերպութեամբ, Եղեռնի 98-ամեակի բողոքի ցույցը տեղի ունեցաւ 23 Ապրիլ 2013-ին, Տանհար քաղաքին մէջ: Ցույցին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտները, անդամներն ու Հայ համայնքի զաւակները:

Հաւաքը սկսաւ առաւօտուն, քաղաքի խորհրդարանի հրապարակին վրայ: Ներկայ էին տարազաւոր 40 սկաուտներ եւ 10 դայիկներ, քոյր միութիւններու եւ կազմակերպութիւններու անդամներ: Յեղասպանութեան ոգեկոչման մասնակցեցան նաեւ հայկական հարցին աջակցող հոլանտական դանազան կուսակցութիւններու ներկայացուցիչներ, որոնք փոխանցեցին խօսքեր: Կոչեր եղան Յեղասպանութեան միջազգային, ինչպէս նաեւ Թուրքիոյ կառավարութեան կողմէ ճանաչման ուղղութեամբ: Այս ուղղութեամբ պահանջադիր մը փոխանցուեցաւ խորհրդարանի արտաքին գործերու յանձնախումբին:



Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներու տողանցքով ցուցարարները ուղղուեցան դէպի թրքական դեսպանատուն:

Նոյն երեկոյան, Հ.Մ.Ը.Մ-ի անդամները մասնակցեցան հսկում-քայքայի մը, որ ծայր առաւ խորհրդարանի հրապարակէն եւ ուղղուեցաւ դէպի

թրքական դեսպանատուն: Տեղւոյն վրայ հոգեհանգստեան պաշտօն կատարեցին Ալմելոյի հոգեւոր հովիւ Մաշտոց Բնյ: Պաղտասարեան եւ Ամսթերտամի հոգեւոր հովիւ Տարօն Բնյ: Թաղիսեան:

Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, որուն ընդմէջէն ներկայաց-

ւեցաւ Հայ Ժողովուրդի պատմութիւնն ու Հայրենիքի հանդէպ սէրը:

24 Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի սկաուտները իրենց մասնակցութիւնը բերին Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կազմակերպուած յուշահանդէսին, մատուցելով ազգային երգեր եւ արտասանութիւններ:

with the complements of

Restaurant Al-Mayass



«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐ» ՄԵՄԻՆԱՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՈՒՔՐԱՆԻՈՅ ՄԷՋ



տազայ աշխատանքներուն քննարկման նպատակով, Եւրոասիական տարածաշրջանի ըսկաուտական կեդրոնին մէջ (Կրասնոկամենկա, Ուքրանիա) տեղի ունեցաւ յատուկ սեմինար, որուն մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան եւ Արմաւիրի խմբապետուհի քոյր Նարէ Խլղաթեան:

Սեմինարին յաջորդեց շրջանի սկաուտական կազմակերպութիւններու դեկավարներու խորհրդակցութիւն, որուն ընթացքին անդրադարձ եղաւ Հոկտեմբերին Քիելի մէջ տեղի ունենալիք շրջանային խորհրդաժողովին:

«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԲԱՆԱԿՈՒՄԸ ԲԻՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ

«Խաղաղութեան սուրհանդակներ-Հայաստան» ծրագրի ծիրէն ներս, Յունիսին, Բիւրականի մէջ տեղի ունեցաւ ընկերային խնամք ներկայացնող 10 հաստատութիւններու անապահով երեխաներու սկաուտական առաջին դպրոց-բանակումը, նպատակ ունենալով համալրել մասնակիցներու սկաուտական գործնական հմտութիւնները եւ տեսական գիտելիքները, անոնց մօտ խթանելով անհատական կարողութիւններու բացայայտումն ու զարգացումը:

Թղթակից ԵՐԵՒԱՆ

Համաշխարհային Սկաուտական Շարժման նախաձեռնութեամբ իրականացաւ «Խաղաղութեան սուրհանդակներ» ծրագիրը, նպատակ ունենալով սկաուտներու կամաւորական ջանքերով նպաստել խաղաղութեան ամրապնդման եւ հանրօգուտ աշխատանքներու ծաւալման:

Ծրագրի մանրամասնութիւններուն եւ հե-



ԵՌԱԲԼՈՒՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Թղթակից
ԵՐԵՒԱՆ



Յունիսի 1-ին, եղբ. Վարդան Բախչեանի ծննդեան օրը, իրենց յարգանքի տուրքը մատուցելու նպատակով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ

Մկրտչեանը, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեանը, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան անդամ եղբայրներ Հրաչեայ Շմաւոնեան, Օշին Փիրումեանը եւ Հ.Մ.-

Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ողջ աստիճանաւորական կազմը այցելեցին Եռարշուր:

Աւագ եղբոր եւ օրինակելի խմբապետի՝ եղբ. Վարդանի կերպարը եղիլ եւ շարունակոււմ է մնալ հայ սկաուտի իտէալ: Նրա ու իր ընկերների ջանքերի շնորհիւ մայր հայրենիքում վերածնուած կառույցի՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անդամները միշտ վառ կը պահեն Վարդանի յիշատակը...



ԵՂԲ. ԼԵՒՈՆ ԹԱՇՃԵԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ «ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՕՐ»ՈՒԱՆ

Թղթակից
ԵՐԵՒԱՆ

Ամէն տարի, Յունիս ամսուն, Հայաստան կրնչէ միջազգային «Ողիմպիական օր»ը: Այս առիթով, Հայաստանի մարզական նախարարութիւնը կը կազմակերպէ զանազան ձեռնարկներ: Այդ ձեռնարկներու շարքին, այս տարի, նախարարութիւնը 22 Յունիս 2013-ին կազմակերպեց վազքի մրցում մը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Լիբանանէն Հայաստան հաստատուած եղբ. Լեւոն Թաշճեան:



Միջազգային ողիմպիական կոմիտէի եւ Հայաստանի ողիմպիական կոմիտէի հովանաւորութեամբ տեղի ունեցած վազքի այս մրցումը ունեցաւ 3000 մեթր երկարութիւն: Ան ընթացք առաւ Երեւանի «Հանրապետութեան» հրապարակէն, մասնակցութեամբ 7000 երկսեռ վազողներու, որոնք

եկած էին Հայաստանի զանազան մարզերէն:

«Հանրապետութեան» հրապարակէն սկսելով, վազողները ուղղուեցան «Ամիրեան» փողոց, ապա՝ Մաշտոցի պողոտայի ստորերկրեայ անցքէն եւ յաղթանակի կամուրջէն անցնելով անոնք վազեցին մինչեւ «Հրազդան» մարզադաշտ: Մարզադաշտի մուտքին վազողները դիմաւորեցին միջազգային ողիմպիական կոմիտէի եւ Հայաստանի ողիմպիական կոմիտէի նախագահներ Ժաղ Ռոկըր եւ Գագիկ Ծառուկեան:

Եղբ. Լեւոն Թաշճեան 3000 մեթր վազքը աւարտեց 13 վայրկեանէն եւ գրաւեց տարիքային իր խմբաւորման առաջին դիրքը: Ան ստացաւ վկայական մը, ստորագրուած՝ Ժաղ Ռոկի եւ Գագիկ Ծառուկեանի կողմէ, նաեւ արժանացաւ նիւթական պարգեւի մը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԹԷՆՔԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԼՈՂԻ ԵՒ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՆՈՒՒՐՈՒԱԾ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻՆ

Ներկայ մր ԱԹԵՆՔ

Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.ի Աթենքի մասնաճիւղը լողի եւ պասքեթպոլի (3x3) մրցաշարքերով նշեց միութեան հիմնադրութեան 95-ամեակը: Լողի մրցաշարքը տեղի ունեցաւ Կիրակի, 19 Մայիսի առաւօտուն, Նէա Չմիռնիի փակ լողաւազանին մէջ: Հայ եւ յոյն բարեկամներու ու մարզասէրներու ներկայութեան, մրցաշարքին բացումը կատարեց մասնաճիւղի ատենապետ եղբ. Ֆիլիփ Ծերոնեան: Ան իր խօսքին մէջ անդ-



րադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի համասփիւղքեան կառույցի 95-ամեայ պատմութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Աթենքի մասնաճիւղին եւ խումբերուն գործունէութեան, նկատել տալով որ թուականը կը գուգադիպի պոնտոսցիներու ցեղասպանութեան թուականին: Ան յայտնեց, որ աշխարհի չորս ծագերուն ապրող հայութիւնը կը խոնարհի 1914-1923 Օսմանեան Թուրքիոյ նախճիրներուն զոհ գացած հազարաւոր պոնտոսցիներու յիշատակին դիմաց:

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի լողի խումբի մարզիչ Նիքոլ Վուցինա: Ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի լողի մարզիկներու այս տարուան յաջողութիւններուն, համատիկէի լողի մրցումներու ծիրէն ներս, որոնց մասնակցած են 10 մարզիկներ եւ խլած են 5 առաջնութեան մետալներ, իսկ մնացեալները դիրքեր գրաւած են ընդհանուր դասաւորման առաջին ութեակին մէջ:

Խօսքերէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի լողի 100-է աւելի մարզիկներ մրցեցան եւ մրցումներէն ետք վարչութեան կողմէ ստացան մասնակցութեան յիշատակի մետալներ:

ՊԱՍՔԵԹՊՈԼԻ (3x3) ՄՐՑԱՇԱՐՔԸ

Լողի մրցաշարքէն 10 օր ետք, 29 Մայիսէն 2 Յունիս, Ֆիքսի «Առաքելեան-Կիւտէնեան» մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ պասքեթպոլի մրցաշարքը՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակին:

Մրցաշարքին բացումը կատարուեցաւ Չորեքշաբթի, 29 Մայիսին, բերնէ-բերան սրահը լեցուցած հայրենակիցներու ներկայութեամբ: Դաշտին կեդրոնը մեծ պաստառի վրայ գե-



տեղուած էր Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեակի խորհրդանշանը: Մրցաշարքին մասնակցեցան 16 խումբեր, բաժնուած՝ 4 ենթաբաժիններու:

Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեակին առիթով մասնաճիւղը տպած էր գունաւոր թիւըթներ, որոնցմով ներկայացան բոլոր խումբերու մարզիկները:

Հակառակ առաջին օրուան անձրեւին պատճառով խաղե-

րու ընդհատուծին, մրցաշարքը յաջորդ օրը շարունակուեցաւ կանոնաւորապէս ու յաջողութեամբ հասաւ իր լրումին: Շաբաթ օր ներկաները առիթը ունեցան համտեսելու համեղ ճաշատեսակներ:

Կիրակի, 2 Յունիսին, խաղերը սկսան նախատեսուած ժամէն առաջ (Շաբաթ օրուան խաղերը կատարելու համար): Խաղերու ընթացքին, մէջ ընդ մէջ տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի մասնաճիւղի վեթերան աղջկանց եւ կրտսերներու խաղեր: Կիսաւարտական խաղերէն ետք, աւարտական փուլ հասան երկու խումբեր, առաջինը բաղկացած Սիմիտեան Աբրահամէ, Ճանիկեան Գրիգորէ եւ Ծերոնեան Հայկէ, իսկ երկրորդ խումբը՝ կազմուած Աւագեան Միհրանէ, Աւետիսեան Աւետիսէ եւ Մելքոնեան Տիգրանէ:

Աւարտական խաղէն առաջ տեղի ունեցաւ 3 կէտի մրցում: Մասնակցեցան 14 մարզիկներ: Առաջնութիւնը շահեցաւ Եթիմեան Սերգօ: Ժամը հասած էր աւարտական խաղին: Սուր մրցակցութենէ ետք՝ առաջնութեան տիրացաւ առաջին խումբը:

Մրցաշարքին աւարտին, ներկայութեամբ Ազգային Վարչութեան, շրջանի հոգեւոր հովիւ Տ. Նարեկ Քհնյ. Շահինեանի, շրջանի Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» Կոմիտէի, Հ.Կ.Սաչի «Ռուբինա» եւ «Նայիրի» մասնաճիւղերու, Ս. Կարապետ եկեղեցույ թաղականութեան, Հ.Յ.Դ. Երիտասարդական եւ Պատանեկան միութիւններու ներկայացուցիչներու եւ Հ.Մ.Ը.Մ-ի պատուակալ նախագահ եղբ. Կարպիս Գուլումճեանի, վարչութեան կողմէ խօսք առաւ եղբ. Արամ Փիլաֆեան: Ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեայ պատմութեան, նպատակին ու առաքելութեան:

Այնուհետեւ, շրջանի հոգեւոր Տ. Նարեկ Քհնյ. Շահինեան ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեակը եւ կազմակերպուած խաղերը, մաղթելով նման նախաձեռնութիւններու շարունակութիւնը: Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Յովակիմեան իր կարգին շնորհաւորեց Աթէնքի մասնաճիւղին յաջող նախաձեռնութիւնը եւ արտայայտուեցաւ 95-ամեակի յաջորդ ծրագիրներուն եւ նախաձեռնութիւններուն մասին:





Յաջորդեցին առաջնութիւնը շահող խումբին բաժակի եւ մետալներու յանձնումը, Յ կէտի առաջնութիւնը շահող մարզիկին ու ակարտականին երկրորդ հանգիսացած մարզիկնե-

րուն պարգեւատրումները: Բոլոր մարզասէրներն ու հայրենակիցները մեկնեցան գոհունակ տրամադրութիւններով:


Հ.Մ.Ը.Մ. Ի ԱԹԷՆՔԻ ՖՈՒԹՊՈՂԻ ԽՈՒՄԲԻՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ՝ ՆԷԱ ԶՄԻՌՆԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Թղթակից ԱԹԷՆՔ

Հինգլաբլի, 30 Մայիսի երեկոյեան, Նէա Զմիրնիի քաղաքապետարանին մարզական բաժանմունքին կազմակերպութեամբ, «Ղալաքսիաս» մշակութային սրահին մէջ տեղի ունեցաւ պարգեւատրումը Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի ֆութպոլի խումբին, որ երկրորդ դասակարգի առաջնութեան տիրանալով իրաւունքը ստացաւ բարձրանալու Ա. դասակարգ (Տէ՛ս «Մարզիկ»ի անցեալ թիւը, էջ 26):

Քաղաքապետարանի մարզական բաժանմունքի գրասենեակի ներկայացուցիչը հաւաքոյթը բանալով ըսաւ, թէ նման հաւաքոյթ մը առաջին անգամ ըլլալով կը կազմակերպուի: Ապա ան ներկայացուց անձնական առաջնութիւն շահած չորս մարզիկները եւ անցաւ պարգեւատրուող խումբերու ներկայացման, հակիրճ պատմականը կատարելով անոնց գործունէութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի պարագային, նախապատուութիւն տալով փոխ քաղաքապետ Վանկելի Խաչատուրեանին, զինք բեմ հրաւիրեց: Խաչատուրեան իր յուզումը յայտնեց իրեն տրուած պատիւին համար՝ պարգեւատրելու իր հայրենակիցներու խումբը: Փոխ քաղաքապետը շնորհաւորեց խումբը իր ձեռք բերած յաջողութեան համար, ապա շնորհակալութիւն յայտնեց մարզական ճիւղի պատասխանատու Փոլիտորաս Սիրիդոսին, որ խումբերուն մօտէն հետեւեցաւ, չզլացաւ որեւէ աջակցութիւն եւ գոհացում տուաւ անոնց նիւթական ու բարոյական պահանջներուն: Ան յայտնեց, թէ տարիներով գործակցած է անոր հետ եւ ծանօթ է անոր բնաւորութեան: Խաչատուրեան խօսքը վերջացուց յայտնելով, թէ հաւա-



քոյթը իր յղացումն է: Ապա անցաւ պարգեւատրման արարողութեան:

Աւարտին խօսք տրուեցաւ քաղաքապետ Ծուլաքիսին: Ան շնորհաւորեց խումբերը, իրենց ունեցած յաջողութեան եւ դասակարգի մէջ վերելքին համար եւ մաղթեց նորանոր յաջողութիւններ, բարի մրցակցութեան ոգիով: Խօսքը ուղղելով խումբերուն, մանաւանդ իրենց պատասխանատուներուն, ան ըսաւ, թէ «մենք լաւապէս տեղեակ ենք

իրենց թափած ճիգին, հետեւաբար կը գնահատենք իրենց աշխատանքը, նիւթական ծանօթ նեղ պայմաններուն մէջ»:

Շարունակելով, ան հաստատեց. «Մենք կը հաւատանք անհրաժեշտութեանը այս խումբերուն, որոնց լուրջ աշխատանքին սիրոյն երիտասարդութիւնը կը հաւաքուի եւ հեռու կը մնայ ճնշող ու ապականիչ մթնոլորտներէ»:

Այս առիթով Ծուլաքիս յայտնեց, թէ քաղաքապետարանը պըն. Սիրիզոսի միջոցաւ նեցուկ կանգնած է խումբերուն եւ հակառակ նիւթական դժուարութիւններուն, իր կարելիութեան սահմաններուն մէջ չէ գլացած որեւէ պահանջի գոհացում տալէ:

Այնուհետեւ խօսք առաւ մարզական բաժանմունքի պատասխանատու փոխ քաղաքապետ պըն. Սիրիզոս: Ան եւս շնորհաւորեց խումբերու յաջողութիւնը եւ խոստացաւ, ինչպէս անցեալին, նաեւ ապագային մօտէն հետեւիլ խումբերու աշխատանքին եւ օգտակար հանդիսանալ որեւէ ակնկալութեան:

Անդրադառնալով «Ղալաքսիաս» կեդրոնին, ան նշեց, թէ անցեալին երիտասարդներու սրճարան մըն էր այս վայրը, որ քաղաքապետարանի որոշումով վերափոխուեցաւ՝ կոկիկ եւ սիրուն սրահ մը դառնալով, ինչ որ առիթ կուտայ նման հաւաքոյթներու կազմակերպման: Ան փափաք յայտնեց աւելի

մեծ թիւով խումբերու ներկայութիւնը տեսնել յառաջիկայ տարուան պարգեւատրման արարողութեան, ինչպէս նաեւ՝ աւելի մեծ թիւով ժողովուրդ:

Գ ո վ ա ս ան ք ի արտայայտութիւններ եղան Հ.Մ.-Ը.Մ.-ի հասցէին: Դիտել տրուեցաւ, որ «Արմենիքի» խումբը իր ներկայութիւնը պարտադրեց դաշտին մէջ, իր մարզիկներու պարտաճանաչութեամբ եւ մարզական բարձր ոգիով:

Վերջին խօսողը եղաւ Հ.Մ.-Ը.Մ.-ի անխոնջ վարչականներէն եւ Ֆուլթոլի մարզիկներէն եղբ.

Սերգօ էրջէնեանը: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց բոլոր խօսողներու անկեղծ արտայայտութիւններուն համար, ապա շնորհաւորեց խումբերու



յաջողութիւնները եւ մաղթեց նոր դասակարգի բարձրացում՝ յառաջիկայ տարեշրջանի մրցումներուն ընթացքին:

Եղբայրը երախտագիտական խօսք ուղղեց քաղաքապետին, իր անվերապահ աջակցութեան համար, ապա խնդրեց ընդունիլ Հ.Մ.-Ը.Մ.-ի վարչութեան կողմէ խորհրդանշական նուէր մը՝ Հ.Մ.-Ը.Մ.-ի Ֆուլթոլի խումբի շապիկ մը, որուն մէկ կողմը տպուած է «Արմենիքի» անունը, իսկ միւս կողմը՝ տասը թիւը:

Քաղաքապետը մեծ ուրախութեամբ ընդունեց նուէրը եւ յայտարարեց, թէ շապիկը պիտի կախէ իր գրասենեակին ամէնէն աչքառու տեղը:

Հաւաքոյթը վերջ գտաւ ուրախ մթնոլորտի մէջ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՔԻՆԻՈՅ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ՎՈՒԻՊՈՒԻ Ա. ՄՐՑԱՇԱՐՔԸ



Թղթակից ԱԹԵՆՔ

Շաբաթ, 11 եւ կիրակի, 12 Մայիս 2013-ին, Աթէնքի «Ջաւարեան» կեդրոնի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Գոքինիոյ մասնաճիւղին վոլիպոլի մրցաշարքը:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին Փեթրուփոլիսի, Փանիոնիոսի, ինչպէս նաեւ Էսփերոս խումբերու երէցները: Հ.Մ.Ը.Մ. մասնակցեցաւ տղոց եւ երէցներու իր խումբերով:

Հ.Մ.Ը.Մ. յաղթեց Փեթրուփոլիս խումբին եւ պարտուեցաւ Փանիոնիոսէն, իսկ երէցներու խումբը յաղթական հանդիսացաւ Էսփերոսի երէցներու խումբին հետ մրցումին:

Փեթրուփոլիս եւ Փանիոնիոս խումբերուն միջեւ խաղը վերջացաւ Փանիոնիոսի յաղթանակով:

Բոլոր խաղերու ընթացքին նկատելի էր խումբերու մարզական

լաւ վիճակը եւ մարզական բարձր ոգին, որ տիրական էր մրցաշարքի անբողջ տեւողութեան: Մրցաշարքի վերջաւորութեան բոլոր խումբերը եւ մարզասէրները հաւաքուեցան «Ջաւարեան» կեդրոնի «Սարաճեան» սրահը, ուր Հ.Մ.Ը.Մ.Ի խումբի մարզիչ եղբ. Խրիսթոս Ռոմեան շնորհակալութիւն յայտնեց օտար խումբերուն եւ իրենց պատասխանատուներուն, որոնք ընդառաջեցին Հ.Մ.Ը.Մ.Ի հրաւերին:

Ապա, ան հրաւիրեց եղբ. Թ. Յովակիմեանը քանի մը խօսքով օտար ներկաներուն բացատրելու Հ.Մ.Ը.Մ.Ի կազմակերպած մրցաշարքին նպատակը:

մակերպած մրցաշարքին նպատակը:

Եղբ. Յովակիմեան խօսքը սկսաւ ըսելով, որ Հ.Մ.Ը.Մ. եւ Փանիոնիոս հետեւած են նոյն ուղիին: Փանիոնիոս հիմնուած է Իզմիրի մէջ, Իզմիրի աղէտէն ետք, երբ յոյն գաղթականները հիմնած են Նոր Իզմիր (Նէա Ջմիրոնի) քաղաքը: Փանիոնիոս խումբը եւս փոխադրուած եւ գործած է հոն:

Նմանապէս, Հ.Մ.Ը.Մ. հիմնուած է 95 տարի առաջ, Թուրքիոյ տարածքին, Պոլսոյ մէջ, եւ հայաջինջ սպանդէն ու Իզմիրի կոտորածէն վերջ փոխադրուած է Յունաստան: Եղբ. Յովակիմեան



բացատրեց սակայն, որ Հ.Մ.Ը.Մ.ը մաս կը կազմէ համագաղութային կառույց ունեցող մեծ ընտանիքի մը, որ Հայաստանի եւ Սփիւռքի զանազան գաղութներուն մէջ կը հաշուէ տասնեակ հազարաւոր մարզիկներ, գրեթէ բոլոր մարզաձեւերու մէջ խումբեր ունենալով: Հ.Մ.Ը.Մ. ունի նաեւ ըսկաուտական խումբեր:

Ապա, եղբայրը նըշեց, որ հայութեան

պարագային, ժողովուրդին երկու երրորդը կը բնակի Սփիւռքի գանազան երկիրներու մէջ եւ իր գոյութիւնը պահելու համար ունի եկեղեցիներ, ակումբներ, բարեսիրական-մշակութային եւ մարզական միութիւններ, որոնք իրենց գործունէութեամբ կը ձգտին հայապահպանման կենսական նպատակին:

Բոլոր գաղութները հետեւանքն են Հայկական Յեղասպանութեան, զոր 1915-ին կազմակերպեց Թուրքիան, բնաջնջելու համար Թուրքիոյ տարածքին ապրող հայութիւնը: Յեղասպանութենէն եւ անոր յաջորդող Իգմիրի կոտորածէն փրկուած հայութիւնը ապաստան գտաւ Սփիւռքի գանազան երկիրներու մէջ: Վերջացնելով իր խօսքը, եղբ. Յովակիմ-



եան գոհունակութիւն յայտնեց, որ շնորհիւ Սփիւռքի մէջ տարուած քաղաքական-քարոզչական լայնածաւալ աշխատանքին, այսօր միջազգային հանրութիւնը տեղեակ է Հայկական Հարցին: Աւելին, մեծ թիւով երկիրներ (անոնց կարգին՝ Յունաստանը) եւ միջազգային կազմակերպութիւններ ճանչ-

ցած են Հայկական Յեղասպանութիւնը:

Ճիշդ է որ ներկայիս ունինք ազատ, անկախ Հայաստան, անկախ Արցախի Հանրապետութիւն, սակայն մենք հայերս պիտի չդադրինք պայքարելէ, մինչեւ որ Թուրքիա ճանչնայ իր գործած Յեղասպանութիւնը եւ հատուցում տայ՝ վերադարձնելով բռնազրաւուած հայկական հողերը հայ ժողովուրդին, շեշտեց եղբ. Յովակիմեան:

Յաջորդեց մասնակից խումբերուն յուշատախտակներու յանձնումը:

Երեկոն շարունակուեցաւ հիւրասիրութեամբ եւ ներկաներու միջեւ մտերմիկ գրոյցով: Մեկնելու ժամանակ խումբերը իրենց գոհունակութիւնը եւ շնորհակալութիւնը յայտնեցին Հ.Մ.Ը.Մ-ի պատասխանատուներուն:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL




PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Թ Ի Թ Ե Ռ Ն Ի Կ Ն Ե Ր

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԷՅՐՈՒԹ



Թ

Թիթեռնիկները միջատներ են, որոնք կը ճանչցուին իրենց կնճիթանման բերանով եւ գունաւոր թեւերով: Կնճիթին շնորհիւ անոնք կը ծծեն ծաղիկներու նեկտարը: Թիթեռնիկներու որդերը կը կոչուին թրթուր. անոնք ունին տասնվեց ոտք եւ կրծելու յարմար կզակներ: Թիթեռնիկները շատակեր միջատներ են: Անոնք կը բաժնուին երկու խումբի՝ ցերեկային եւ գիշերային թիթեռնիկներ:



Ցերեկային թիթեռնիկները կը ճանչցուին իրենց նուրբ մարմինով եւ բարակ, ուղիղ եւ ծայրը հաստ բողկուկներով: Գոյուլթիւն ունի ցերեկային թիթեռնիկի հինգ հազար տեսակ:

Թիթեռնիկները վնասակար միջատներ են, բացի շերամէն: Բայց եթէ թիթեռնիկները չըլլային՝ ո՛չ ծաղիկ, ո՛չ պտուղ, ո՛չ ալ հունտ կ' ունենայինք, որովհետեւ այս միջատներն են որ կը թառին ծաղիկէ ծաղիկ ու կը ծծեն աւիշ եւ ծաղիկներու հիւթ, իրենց բեղմնափոշին տարածելով բոյսերու վրայ:

ՇԵՐԱՄ

Շերամը անչուք ճերմակ թիթեռնիկ մըն է: Հաստ մարմին մը ունի, թեւեր ունեզերքն ալ կան հաստ ատամնածեւ մասեր, որոնց վրայ կը գտնուին շեղ շերտեր: Գրեթէ բոլոր թիթեռնիկներուն մէջ

շերամը մարդուն

ամէնէն օգտակարն է:

Այս պատճառով շերամը կը բուծանեն աշխարհի բազմաթիւ վայրերու, մանաւանդ՝ Հնդկաստանի եւ Փոքր Ասիոյ մէջ: Շերամին իսկական հայրենիքը Չինաստանն է:

Եւրոպացիները շատ ուշ իմացան մետաքսի ծագումին մասին, որովհետեւ պատմութեան համաձայն, վեցերորդ դարուն երկու յոյն կրօնաւորներ շերամի հաւկիթները սնամէջ գաւազաններու մէջ պահելով Պոլիս կը բերեն: Յետոյ այս օգտակար միջատը կը սկսին բուծանել Յունաստանի, Իտալիոյ եւ հարաւային Ֆրանսայի մէջ: Երկար ժամանակ շերամաբուծութիւնը եւ մետաքսագործութիւնը կը դառնայ հազարաւոր մարդոց արհեստը:

Շերամին թիթեռնիկը Յուլիսի վերջերը բոժոժէն դուրս կ' ելլէ: Էգը 200-300 ձուեր կ' ածէ: Ասոնք ամբողջ ձմեռը կը մնան: Գարնան, Մայիսին, կը ծնին: Այդ միջոցին թիթեռնիկները իրենց կանաչ տերեւներով կը զարդարին: Շերամները կը սնանին միայն ճերմակ թիթեռնիկի տերեւներով: Շատակեր են, շատ շուտ կը մեծնան, մինչեւ որ կատարելապէս աճին, չորս անգամ իրենց մորթը կը փոխեն: Այս շրջանը կը տեւէ չորս շաբաթ: Յետոյ, սովորաբար ծառերու ճիւղերուն միջեւ իրենց բոժոժը կը մանեն: Թրթուրին բոժոժը հիւսելու տեւողութիւնը չորս օր է: Հիւսուած բոժոժի թելերը մետաքսեայ են: 18-20 օրէն թրթուրը թիթեռնիկի կը վերածուի եւ ան ալ իր կարգին բերնէն դուրս հանած հիւթով մը բոժոժը կը ծակէ ու դուրս կ' ելլէ:






ՀԱՅԿ ՀԱՐՐԻ ՓՐԻՍԹ

Հայկ Հարրի Փրիսթ այլ Հարրի Փրիսթ ծնած է 23 Նոյեմբեր 1896-ին, Ֆրեզնո, հայ գաղթականներու ընտանիքի մը մէջ: Անոր իսկական մականունը Քէշիչեան է: 1920-ին, Անվերի մէջ կազմակերպուած ողիմպիական խաղերուն, ան մասնակցած է Մ. Նահանգներու հաւաքականին հետ եւ ջրացատկի մրցումներուն արժանացած է պրոնզէ մետալի: Փրիսթին հետ պատահած է հետեւեալ գուարճալի պատմութիւնը:


Անձանօթ պատճառներով, ողիմպիական մարզադաշտէն անհետացած է նշուած խաղերու գլխաւոր դրօշը, որ երկար տարիներ չէ գտնուած: 1997 թուականին,



այսինքն՝ 77 տարի ետք, Մ. Նահանգներու ողիմպիական կոմիտէի կազմակերպած ճաշկերոյթէն ետք, լրագրողները 1920 թուականի ողիմպիական խաղերուն մասնակցած եւ մինչ այդ ողջ մնացած միակ մասնակցողին՝ Հայկին կը յիշեցնեն անհետացած դրօշին մասին:

- Ես ձեզի կրնամ օգնիլ, - կ'ըսէ Փրիսթ, - դրօշը ճամպրուկիս մէջն է:

Այս առիթով ի յայտ կու գայ, որ 1920-ի ողիմպիական խաղերու աւարտին, Փրիսթ իրեն խմբակից Տիւք Քահանամոկուի դրդումով բարձրացած է ձողին վրայ եւ «գողցած է» դրօշը, զոր 77 տարի պահած է ճամպրուկին մէջ: Ի վերջոյ, դրօշը վե-




րադարձուեցաւ Միջազգային Ողիմպիական կոմիտէին: 2000-ի ողիմպիական խաղերուն, Սիտնիի մէջ կատարուած յատուկ արարողութեան ժամանակ, 103 տարեկան Փրիսթ դրօշը յանձնեց կոմիտէի նախագահ Խուան Անթոնիօ Սամարանչին: Այժմ դրօշը կը ցուցադրուի Լոզանի միջազգային ողիմպիական թանգարանին մէջ:



ԿԱՊՈՅՑ ԳԻՒՂԻՆ ՊԱՅՄՈՒԹԻՒՆԸ

Սպանիոյ Անտալոս շրջանին մէջ գիւղացիները աւանդաբար ճերմակ կը ներկէին իրենց տուններու երզիքները: Օր մը, Հոլիվուտեան Ֆիլմի ներկայացուցիչներ կ'առաջարկեն, որ բոլորը իրենց տուններու երզիքները կապոյտ ներկեն՝ Ֆիլմի մը ծանուցումին տեսահոլովակը նկարելու համար: Գիւղացիները կը համաձայնին, այն համոզումով որ Հոլիվուտ նկարահանումներու աւարտին կրկին կը ներկէ բոլոր տունները՝ բնակիչներու ցանկութեամբ: Սակայն, ի վարմանք բոլորին, զբօսաշրջիկներու հոսք մը կը սկսի... կապոյտ գիւղը տեսնելու համար:



Ի վերջոյ, գիւղին 220 բնակիչները կը քուէարկեն գիւղը կապոյտ ներկուած ձգելու համար:

Տարբեր Յայեացքով



Էլի Յուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

6	1		8		4	9
		7	4			
	7	4			5	1
9				8		7
	4		7			6
5			3			4
	2	9			3	7
			6		9	
4	3		2		5	8

Յորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

4	9	1	3	2	6	5	7	8
5	6	8	4	7	1	2	9	3
7	3	2	5	8	9	1	6	4
3	8	7	2	6	4	9	5	1
6	4	9	8	1	5	7	3	2
1	2	5	9	3	7	4	8	6
8	7	4	6	5	2	3	1	9
2	1	6	7	9	3	8	4	5
9	5	3	1	4	8	6	2	7


Պատասխանը՝ յաջորդիւ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- «Էն. Պի. էյ»ի կազմերէն:
- Դարուկ, արեկան - Խառնածին հորքոտանի:
- Ֆրանսական քաղաք - Մորթային բիծ:
- Այծուղտ - Ափրիկեան երկիր - Որովհետեւ:
- Հայկական աղօթագիրք - Մանուկներուն կաթ տալու պտկաւոր սրուակ - Անձնական դերանուն:
- Հրանիւթ - Տարածքի միաւոր - Կրկնուած բաղաձայններ:
- Դամասկեան սալոր - Յուցական ածական:
- Լծկան կենդանի - Յիշատակէ՛:
- Ծեփելու շաղախ - Հիւլէական, միջուկային:
- Մէջը պարապ՝ բնակարան - Պատ - Նազանքով քալել:
- Շաղկապ - Որձ - Կախարդութիւն:
- Իգական օտար անուն - Ճգմէ՛ - Արական օտար անուն:
- Դրկից գիրեր - Չայնանիչ - Հայ գուսան:
- Տէր բայի - Ճրագակալ, բազմակալ:
- Տառի մը անունը - Չայնանիչ - Ֆրանսական քաղաք:
- Պարտքերը վճարելու անկարող վաճառական - Սպանացի գեղանկարիչ:
- Փոքրացնող մասնիկ - Այբուբենէն:
- Երիցուկ - Յովհաննէս Թումանեանի ծննդավայր գիւղը:
- Հնձելու գործիք - Հռոմէական դիցուհի:
- Հետք, ուղի - Արտագաւիթ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Տարուան ամիսներէն - Համբոյր:
- Վրաստանի գետերէն - Օտար սրբուհի - Ապականութիւն:
- Բազմութիւն - Ածականակերտ մասնիկ - Յարութիւն Շահրիկեանի ծածկանուններէն:
- Այեր - Հայաստանի 2012 տարուան լաւագոյն մարզիկը:
- Աստուածային - Ստացական ածական - Կենսական - Սպասէ՛:
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախկին կարգավիճակը - Պէս - Դրկից գիրեր - Նմանաձայն տառեր:
- Իտալական լրատու գործակալութիւն - Ուրիշ - Ոչխար:
- Յուցական ածական - Արական անուն - Փոքրացնող մասնիկ:
- Տկարակազմ - Սպարտակ Մոսկուայի հայազգի մարզիկը:
- Չայնանիչ (հակ.) - Առատ հաւկիթ հայթայթող (հաւ) - Յարաբերական դերանուն:
- Ճատրակի լիբանանահայ վարպետ - Ռուսերէն՝ այո՛:
- Թերթի երես - Ադամանդ - Տարածքի միաւոր - Եւրոպական ընդլայնակեայ գինեալ կազմակերպութիւն մը - Չայնանիչ (հակ.):
- Առատ - Գնդագլուխ բանջար - Անձնական դերանուն - Ածականակերտ մասնիկ:
- Տեղեակ, ծանօթ - Թիկունք - Յուցական ածական:
- Լիբանանահայ հայրենակցական միութեան մը բնօրրանը - Ծովասպատակ - Մէկ աչք ունեցող - Աղբիւր:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1														
2														
3														
4														
5														
6														
7														
8														
9														
10														
11														
12														
13														
14														
15														
16														
17														
18														
19														
20														

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1	L	Ի	Ո	Ն	Ե	Լ	Ս	Ե	Ս	Ի				
2	Ե	Ր	Ն	Ս	Կ		Ս	Ս	Ս	Ն	Ս	Ս		
3	Ի		Յ	Ն	Ո	Ր	Ք		Ս	Ա	Ր	Չ		
4	Ո	Ք		Ա	Ր	Ա		Կ	Ա	Ր	Ի	Ն		
5	Ն	Ա	Չ		Ճ	Ս	Կ	Ի	Թ		Ս	Ո	Ս	Ն
6	Ա	Ի	Ա	Տ						Ի	Կ	Ո	Ի	Ս
7	Ր	Ո	Ք						Ս	Ա	Տ	Ո	Ի	Տ
8	Ո	Ր	Ա	Կ					Ա		Յ	Ր	Տ	Ի
9	Ն		Ր	Ր					Ր		Ա	Ս	Ի	Ճ
10	Ե	Ե		Կ	Ա	Լ	Ա	Ք	Ա	Ր		Ք		Շ
11	Ա	Ր	Դ	Ե	Ն				Յ	Ո		Չ	Ո	Ի
12	Ն	Ե	Ր	Ս					Ս	Ե	Ի		Ս	Յ
13		Ք	Օ		Կ	Ա	Ր	Ս				Ե	Կ	Ս
14				Կ	Ե	Ր			Ս				Փ	Ա
15				Ա	Ո	Ա	Ք	Ե	Ա	Լ		Պ	Պ	Ի
16				Ք	Ա	Կ	Ո	Ր		Ա	Տ	Լ	Ա	Ս
17				Ա	Ս		Լ	Ք	Ե	Լ		Ե	Ն	Ք
18	Ա	Ղ	Ո	Ի		Դ	Ե	Կ	Ի	Ր	Թ		Ն	Ե
19	Պ	Ա	Ր		Ք	Ի	Ր	Ս		Ի		Ը	Ս	Ե
20	Ա	Տ	Ի	Կ	Ա		Ա		Յ	Ն	Ա	Ր	Ի	Չ

ԹԻՒ 208 ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒԹՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ. ԱԼՄԵԼՈ

